

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2013 ԹՎԱԿԱՆ N 7-8 (1283-1284) ՄԱՅԻՍ



ՈՎՔԵՐ ԵՆ ԱՏԵՂԾՈՒՄ «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿԸ»



ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ
ԹՈՐՈՍՅԱՆ
«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի
գլխավոր խմբագիրը

Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ժուռնալիստների միջազգային և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է: Աշխատանքային գործունեությունը սկսվել է դեռևս ուսանողական տարիներին: Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 5-րդ կուրսում սովորելիս աշխատանքի է հրավիրվել Հայաստանի կոմերիտմիության Երևանի քաղաքային կոմիտե՝ որպես ուսանող երիտասարդական բաժնի հրահանգիչ: Ի դեպ՝ ժամանակի համար բացառիկ երևույթ էր ուսանողին քաղաքային կոմիտե աշխատանքի հրավիրելը: Այնուհետև, չցանկանալով աշխատել կուսակցական ապարատում, ՀԿԿ կենտրոնական կոմիտեի որոշմամբ նշանակվել է ժամանակին մեծ հեղինակություն ունեցող «Ավանգարդ» թերթի ուսանողական, ապա նույն թերթի ամենաժամանակավոր և պատասխանատու՝ նամակների և դիմում-բողոքների բաժնի վարիչ: Տասը տարի վարելով նշված բաժինը, զայթակղվելով ուսումնական հաստատությունների՝ ավելի քան 2 ամիս տևող ամառային արձակուրդով, ՀԿԿ քաղաքային կոմիտեի որոշմամբ՝ նշանակվել է «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի խմբագիր:



ԵԼԼԱ ԱՍՏԱՐՅԱՆ

ԵԼԼԱ ԱՍՏԱՐՅԱՆ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի թղթակից
2007 թ. ավարտել է Երևանի խաչատուր Արուսյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության և մանկավարժության ֆակուլտետը:

Մասնագիտական վերապատրաստումն անցել է Վաշինգտոնում: Աշխատել է ՀՀ-ում Ամերիկյան դեսպանատանը կից գործող «Ամերիկյան անկումում», որպես համակարգող:

Ներկայումս «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի թղթակիցն է, միաժամանակ իրականացնում է նաև թերթի սրբագրիչի աշխատանքը:

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի
համակարգչային ձևավորող

2004 թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանը՝ քաղաքագետ-երկրագետ մասնագիտությամբ:

Նախկինում աշխատել է «Կենտրոն» հեռուստատեսության ծրագրերի բաժնում, որպես համակարգող:

Աշխատել է նաև անվտանգության համակարգում, որպես թարգմանիչ:

Ներկայումս իրականացնում է «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» համակարգչային ձևավորումը և համակարգում խմբագրության և տպարանի գործունեությունը:



ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՆՆԱ ԴԵՄՈՒՐՅԱՆ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» թերթի անգլերեն
նյութերի պատասխանատու

2004 թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետի անգլերեն-իտալերեն բաժինը:

Համատեղության կարգով աշխատում է «Քվանտ» վարժարանում, որպես անգլերենի ուսուցիչ:

Խմբագրությունում նրա աշխատանքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Անգլերենով ներկայացվող նրա նյութերը չափազանց կարևոր են ոչ միայն այն առումով, որ ներկայացնում են արտասահմանցիներին, այլև օգնում են օտարներին ճանաչել այն երկիրը, որտեղ սովորում են:



ԱՆՆԱ ԴԵՄՈՒՐՅԱՆ

55 տարի առաջ՝ 1958 թ. մայիսի 22-ին, լույս է տեսել Երևանի բժշկական ինստիտուտի պաշտոնաթերթը, որի ծնունդը ողջունել են ինստիտուտի երախտավորները, առողջապահության նախարարը, Բաքվի և Թբիլիսիի բժշկական ինստիտուտների դիրեկտորները:

Նոր թերթը գալիս էր մասը կազմելու հանրապետությունում լույս տեսնող ընդամենը 6 հանրապետական և մեկ բուհական թերթերի ընտանիքի:

Միակ բուհական թերթը Երևանի պետական համալսարանին էր, որից հետո բժշկական ինստիտուտին է իրավունք վերապահվել ունենալ սեփական թերթ: Թերթը կոչվել է «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ»: Ժամանակին, երբ դեռ չկային այսքան շատ հրատարակություններ, լրատվության տարածման դերը ստանձնում էին բոլոր հիմնարկություններում, բուհերում, դպրոցներում լույս տեսնող պատի թերթերը: Այդ տարիներին բժշկական ինստիտուտում լույս էր տեսնում 3 պատի թերթ, որոնցից մեկը համաինստիտուտային էր, երկուսը՝ ֆակուլտետային: Ամեն տարի կազմակերպվող բուհական պատի թերթերի մրցույթները հետաքրքիր երևույթ էին: Նման մրցույթներից մեկը կազմակերպվել էր պոլիտեխնիկական ինստիտուտում, որտեղ և «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» պատի թերթը շահում է առաջին մրցանակ: Հետագայում նույն թերթի անունն է տրվել ինստիտուտի թերթին:

1954-1964 թթ. «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿԸ» խմբագրել է Անայա Բաբախանյանը, ով, ըստ մեր արխիվում պահպանված հրամանների, ազատվել է աշխատանքից՝ ՀԿԿ կենտրոնական կոմիտեում աշխատանքի անցնելու կապակցությամբ:

1964-1967 թթ. թերթը 4 խմբագիր է փոխել, որոնց խմբագրման ժամանակահատվածը եղել է ոչ այնքան արդյունավետ: 1967-1984-ին «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿԸ» խմբագրել է Միքայել Դարբինյանը: Այս տարիներին «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿԸ» ճանաչվել է լավագույն բուհական թերթերից մեկը:

Միքայել Դարբինյանին փոխարինել են ես և ուրախ եմ, որ ուժերիս ներածին չափով նպաստել եմ այն հանգամանքին, որ բժշկական համալսարանի թերթը դառնա այս կրթօջախի տարեգիրը:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Իր գոյության խորհրդային տարիներին նախ երկու, ապա չորս էջանոց, շաբաթը մեկ լույս տեսնող «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» ժամանակի պահանջներին համաքայլ նյութեր է տպագրել հիմնականում քաղաքական ուղղվածությամբ, կուսակցական բազմազան համագումարների, պլենումների, ժողովների, որոշումների, օրացույցային տոների՝ մայիսմեկյան, Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի, Լենինի ծննդյան, Հայաստանի խորհրդայնացման մասին, 5-ամյակներում, 7-ամյակներում մեր ինստիտուտի հեռանկարների, կուսակցական և կոմերիտական կազմակերպության խնդիրների մասին: Այդ տարիների հրապարակումների մեծագույն մասը նվիրված է սոցիալիստական մրցությանը, ուսանողների և աշխատողների սոցիալատականություններին, նրանց քաղաքական ուսուցմանը: Վերոնշյալ նյութերը տպագրվում էին կուսակցական՝ սկզբնական, շրջանային, քաղաքային, կենտրոնական կազմակերպությունների հսկողության ներքո և հաճախակի ստուգումների արդյունքում արժանանում դրվատանքի կամ քննադատության՝ որևէ կոնֆերանսի կամ պլենումի որոշումները չլուսաբանելու դեպքում:

Մեծ տեղ են հատկացվել քաղաքատիրակներին, ուսանողական, շինարարական ջոկատներին, շեֆական աշխատանքներին: Այդ տարիները համընկնում էին սառը պատերազմի առավել ակտիվացմանը և հասկանալի ցուցումով «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» ևս ներգրավվում է այդ «պատերազմի» մեջ: Մեր երիտասարդության կյանքն առավել երջանիկ, մարդասիրական և հետաքրքիր ներկայացնելուն զուգահեռ հաճախակի լույս տեսնող «Զրույցներ միջազգային թեմայով», «Քո հասակակիցն արտասահմանում» և նմանօրինակ խորագրերի ներքո, որոնք ժամանակին համահունչ՝ աշխատում էին ուսանողին հասցնել այն գաղափարը, որ այստեղ ամեն ինչ լավ է, այնտեղ՝ ամեն ինչ վատ:

Այս ամենը թերթի պարտականությունների մեջ մտնում էր ի պաշտոն: Հայտնի է, թե խորհրդային պետության մեջ որքան էր կարևորվում լրատվամիջոցների գործունեությունը՝ այն համարելով գաղափարական պայքարի ամենահզոր զենքերից մեկը: Այդ տարիներին «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» խմբագրակազմը բաղկացած էր 10 հոգուց, այսօրվա 3-ի փոխարեն:

Թեև քաղաքական ուղղվածության նյութերի պահանջվող քանակը չափազանց մեծ էր, այնուամենայնիվ, այդ տարիներին թերթում տեղ է գտնվել նաև այն ամենի համար, ինչը կարող է մեզ հետաքրքրել այսօր, որպես մեր կրթօջախին առնչվող պատմական փաստեր:

Թերթի ամենաառաջին համարներից կարող ենք տեղեկանալ, թե ե՞րբ են կառուցվել մեր մասնաշենքերը, ովքե՞ր են եղել մեր լավագույն ուսանողները, որոնք այսօր հիմնականում կազմում են մեր դասախոսական կազմի ավագ սերունդը, բժշկագիտության երախտավորների գործունեության մասին՝ երբ նրանք դեռ երիտասարդ էին, ովքե՞ր են եղել մեր կրթօջախի հյուրերը անվանի արվեստագետներից, ինչպե՞ս է կազմակերպվել ուսանողների համգիստը, մշակութային դաստիարակությունը, ովքե՞ր են եղել ժամանակի անվանի դասախոսները, գիտնականները, ինչպե՞ս է ընթացել նրանց գիտական գործունեությունը և այլն, և այլն: Նրանցից շատերը թերթի լավագույն բարեկամներն էին, այդպիսի մի վկայություն ներկայացվում է ձեր ուշադրությանը.

«Սիրելի՛ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ», մենք ծանոթացել ենք անցյալ դարի 50-ական թվականներին, երբ դու ընդամենը 1 տարեկան էիր, իսկ ես՝ երիտասարդ մի բժիշկ... Դու դեռևս շատ փոքրիկ էիր, քայլում էիր երեքալույծ, բայց բոլոր տվյալներից երևում էր, որ ամուր կանգնելու էիր գետնին և ունենալու էիր սեփական դիմանակար՝ սուր և իմաստուն մտքերի հետ մեկտեղ:

Ես նույնպես նորեղուկ էի ու նոր էի մտնում գիտության և մանկավարժության բնագավառը, քաջ գիտակցելով, որ ոտք եմ դնում մի աշխարհ, որտեղ անհայտը ավելի շատ էր, քան հավաստի ճիշտը:

Ես ևս մեծ բավականություն ունեցա երկար ժամանակ քայլեցի քեզ հետ, տեսա քո նվաճումները...

Դու բարդ մասնագիտական դիմանակար և բովանդակություն ունեցող բուհի զավակ էիր և պետք է կարողանայիր ճիշտ համակշռել լրագրողական արվեստին և բժշկական գիտությանն ու մասնագիտություններին հատուկ բարդությունները, որպեսզի հավասարաչափ սիրելի լինեիր բոլորին, որպեսզի բժշկագիտության մեջ լինեիր ամենահմայիչ լրագիրը, իսկ լրագրերի մեջ՝ ամենաիմաստուն բժիշկը: Եվ դու անցար լուսավոր ճանապարհ՝ թերթից վերածվելով զուսնագարդ և հմայիչ մի հանդեսի: Իմ ջերմագին շնորհավորանքները քեզ, սիրելի՛ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ»:

Թերթի 50-ամյակը շնորհավորող այս ուղերձի տակ ստորագրված է՝ ակդեմիկոս ԵՄԻԼ ՍԱՍՈՆԻ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

Հետխորհրդային շրջանում թերթը ազատվեց կուսակցական մամլիչ ճնշումներից, թեև մինչ այդ էլ արդեն թերթի ուշադրության կենտրոնում փոփոխություններն էին՝ ազգային զարթոնքը, ինքնորոշման գաղափարները, դեմոկրատացումը...

Օգտվելով այն հանգամանքից, որ բուհական թերթերը ինչ-որ չափով դուրս էին մնում կուսակցական խիստ վերահսկողությունից, «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» անցնում է պարտիզանական գործունեության: Ժամանակի համար չափազանց համարձակ քայլ էր մեր թերթի 20 էջանոց ռուսերեն հատուկ թողարկումները, որոնցում տպագրվում էին Արցախին վերաբերող մեր մտավորականության հոդվածները: Արցախի հարցի առնչությամբ համատարած լուսության պայմաններում, հասկանալի պատճառներով, այս մասին չէր կարող խոսել հանրապետական մամուլը: Մեր վերոնշյալ թողարկումները ուղարկվում էին խորհրդային Միության բոլոր բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ հույս ունենալով այդ կերպ տեղեկացնել մեզ համար կարևոր ու կենսական հարցին:

Հետխորհրդային ժամանակին հաջորդած ազատ տնտեսության պայմաններում, երբ ամեն ինչում գնում էր «տնտեսման» քաղաքականության, բազմատպաբանակ թերթերի, հաստիքների կրճատումներին զուգահեռ՝ շատ բուհերի ռեկտորներ փակեցին իրենց թերթերը՝ բացառությամբ երևանի պետական համալսարանի, ժողտնտեսության և բժշկական ինստիտուտների, որոնց ռեկտորները ըմբռնեցին թերթի նշանակությունը: Ի պատիվ բժշկական համալսարանի այդ տարիների ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի է խոսում այն փաստը, որ համընդհանուր տնտեսման ֆոնի վրա, երբ այնքան շատ էին թերթի ավելորդության մասին խորհրդատուները նրա շուրջ, նա ոչ միայն չփակեց թերթը, այլև հնարավորության սահմաններում նրան տվեց այնպիսի արտոնություններ, որոնք, հնարավորություն են տալիս ինձ՝ թերթի խմբագրիս, հավաստելու, որ այդ ծանրագույն ժամանակները թերթի «ոսկեդարն» էին:

Ա.Թ.

Մայիսի 1 Աշխատանքի օր

Աշխատանքը մարդու կյանքի հաջողության և գեղեցկության գրավականն է: Մայիսի 1-ը աշխատավորների միջազգային օրն է: Այն պատմության մեջ մտել է 1886-ից, երբ ամերիկացի բանվորները դուրս եկան փողոց՝ պահանջելով 8-ժամյա աշխատանքային գրաֆիկ: Այժմ այս տոնը նշվում է աշխարհի բազմաթիվ երկրներում որպես աշխատանքի օր:

Մայիսի 3 Մամուլի ազատության օր


Անհնար է պատկերացնել կյանքն առանց մամուլի, երկիրն՝ առանց թերթերի, մարդկանց՝ առանց խոսքի ազատության...

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր վեհաժողովի կողմից 1993-ին սահմանվեց մամուլի ազատության համաշխարհային օր, որից հետո ամեն տարի մայիսի 3-ը նշվում է որպես մամուլի ազատության զնահատման համաշխարհային օր:



Մայիսի 1

Վիլեն Պարույրի Հակոբյան-75



Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանը շնորհավորում է հայտնի բժիշկ-դեղագետ, գիտնական, հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, մանկավարժ, հասարակական գործիչ, 1987-2006 թթ. ԵՊԲՀ ղեկավար, այժմ՝ ԵՊԲՀ ղեկավարի խորհրդական, ՀՀ ԳԱԱ քնական

գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, միջազգային ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանին՝ ծննդյան 75-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Մայիսի 8

Երկրապահի օր

Երկրապահ բառի իմաստը մեկն է՝ հաղթանակ... Լինելով Արցախյան ազատամարտի բոլոր ճակատամարտերում, անցնելով դաժան, բայց շատ վճռական փորձություններ՝ հիմք դառնալով հայոց նորաստեղծ բանակի:



Մայիսի 9

Շուշիի ազատագրման, հաղթանակի և խաղաղության օր

Հայրենասիրությունը հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է:

ՀՈՎԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎ
ԽՍՀՄ մարշալ

Մայիսը հաղթանակների ու տոների ամիս է: Հաղթանակներ, որոնք մեր պատմության ամենալուսավոր էջերից են: Մայիսի 9-ը փառավոր հաղթանակների օր է, կրկնակի տոն: Այդ օրը հայ ժողովուրդը նշում է Հայրենական մեծ պատերազում տարած հաղթանակը և Շուշիի ազատագրումը: Հայրենական մեծ պատերազմում ավելի քան 100 հայ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

1992թ. մայիսի 9-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերի փայլուն հաղթանակի շնորհիվ ազատագրվեց հինավուրց բերդաքաղաք Շուշին:

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵԴԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
Editor Seda KH. TOROSYAN

Թղթակից
ԷԼԼԱ ԱՍՄԱՐՅԱՆ
Անգլերեն նյութերի պատասխանատու
ԱՆԱՅԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ
Համակարգչային ձևավորումը
ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացող
Երևանի Միխիթար Յերացու անվան պետական
բժշկական համալսարան պետական ոչ
առևտրային կազմակերպություն

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է
«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՄ» ՄՊԸ հրատարակչությունում

Հեռախոս՝ 060-62-12-46, 2-46, 2-47

E-mail: apagabzhishk@ysmu.am

Տպաքանակը՝ 500 օրինակ:

Անվճար

Մայիսի 15

Ընտանիքի օր



Ընտանիքը հասարակությունն է՝ մանրակերտ ձևի մեջ, որի ամբողջականությունից է կախված ողջ մարդկային հասարակության անվտանգությունը:

ԱՂԵՐ

Մայիսի 18

Թանգարանների միջազգային օր

Թանգարանների միջազգային օրը օրացույցում հայտնվել է 1977-ից՝ հռչակվելով Թանգարանների միջազգային խորհրդի որոշմամբ: Յուրաքանչյուր տարի թանգարանների միջազգային օրը նշում են աշխարհի ավելի քան 150 երկրներ, այդ թվում և Հայաստանը: Մայիսի 18-ին բաց են լինելու թե՛ մարզերի, թե՛ երևանի բոլոր թանգարանները մինչև կեսգիշեր. **ի դեպ՝ մուտքն ԱՆՎՃԱՐ:** Թանգարանային գիշերը հիանալի հնարավորություն է մշակութային արժեքների բացահայտման համար:

Մայիսի 22

«ԱՊՍԱԿԱ ԲԺԻՇԿ» թերթ

55 տարի առաջ՝ 1958 թ. մայիսին 22-ին, լույս է տեսել Երևանի բժշկական ինստիտուտի տարեգիրը՝ «ԱՊՍԱԿԱ ԲԺԻՇԿ» պաշտոնագիրը: 1958-ից առ այսօր այն լույս է տեսել 1282 անգամ տարբեր տպաքանակներով, տարբեր ձևաչափերով, սև-սպիտակ, գունավոր...



Մայիսի 26

Ավարայրի ճակատամարտ



Մայիսի 28

Սարդարապատի ճակատամարտ

1918 թվականի մայիսի 21-ից 7 օր շարունակ դողանջել են Էջմիածնի Մարտաճարի և Արարատյան դաշտի բոլոր բնակավայրերի եկեղեցիների զանգերը: Հայ ժողովուրդը շտապում էր պաշտպանել իր հայրենիքի վերջին կտորը: Այն վճռորոշ ճակատամարտ էր հայ ժողովրդի համար, որն ավարտվեց փայլուն հաղթանակով:



Մայիսի 28

ՀՀ Առաջին Հանրապետության օր

Սարդարապատի հերոսամարտի հաղթանակից հետո Թիֆլիսում ստեղծված Հայոց ազգային խորհուրդը հռչակեց հայոց պետականության վերականգնումը՝ ազգային դրոշով, հայոց եռագույնով, հայոց զինանշանով: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ 1918 թ. մայիսի 28-ը հայտարարվեց հայկական պետականության վերականգնման՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օր:



Մայիսի 31

Ծխելու դեմ պայքարի համաշխարհային օր

Վնասակար սովորույթների չարաշահման պատճառով երկար ապրելու հնարավորությունը ավելի կասկածելի է դառնում:



Հայաստանում էին Եվրախորհրդարանի ներկայացուցիչները

Հայոց Սեծ Եղեռնի տարեկիցի օրերին Հայաստանում էին Եվրախորհրդարանում գործող «Եվրամիություն-Հայաստան» բարեկամության խմբի պատգամավորները, ովքեր այդ օրերին հայ ժողովրդի կողքին լինելով, 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը Ծիծեռնակաբերդում հարգելով՝ կրկին վերահաստատեցին իրենց հավատարմությունը համամարդկային բարձր արժեքներին՝ իրենց գորակցությունը ցուցաբերելով Հայոց ցեղասպանության միջազգային լիարժեք ճանաչմանն ու դատապարտմանը:

Խմբի անդամներին՝ ղեկավար Էլենի Թեոխարուսի գլխավորությամբ, ընդունեցին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Աժ նախագահ Յուրի Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:



ՀՀ նախագահը ողջունելով բարեկամության խմբին՝ վերջինիս ստեղծումը համարելով ժամանակի պահանջ ու անհրաժեշտություն, նկատի առնելով Հայաստան-ԵՄ հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակն ու ինտենսիվությունը, վստահություն է հայտնել, որ բարեկամության խմբի գործունեությունը մեծապես կնպաստի Հայաստան-ԵՄ հարաբերությունների սերտացմանն ու առավել խորացմանը, ինչպես նաև Հայաստանին հուզող հարցերը եվրոպական խորհրդարանում բարձրացնելուն:

Եվրոպական խորհրդարանի պատգամավորները հանդիպման սկզբում շնորհավորել են նախագահ Սերժ Սարգսյանին՝ ՀՀ նախագահի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ, ապա վստահեցրել, որ, որպես Հայաստանի բարեկամներ, շարունակելու են աջակցություն ցուցաբերել Հայաստանին եվրոպական խորհրդարանում, եվրոպական այլ կառույցներում և ԵԽ անդամ երկրների խորհրդարաններում՝ նպաստելով Հայաստանի ժողովրդավարական ձեռքբերումների տարածմանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի և Եվրամիության միջև հարաբերությունների զարգացմանը, ներկայիս օրակարգին և արդեն իսկ ստեղծված բարեկամության խմբի գործունեությանը:

Խոսվել է նաև ԼՂ հիմնահարցի կարգավորման ներկա փուլի, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

Եվրախորհրդարանի պատվիրակությունը ԵՊԲՀ-ում

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առաջին աստիճանի շքանշանով պարգևատրվեց «Եվրամիություն-Հայաստան» բարեկամության խմբի ղեկավար, մանկական վիրաբույժ, պրոֆեսոր Էլենի Թեոխարուսը:

Պարգևատրման հանդիսավոր արարողությանը ներկա էին Ֆրանսիայի ազգային ժողովի պատգամավոր Վալերի Բուայեն, ՀՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը, Աժ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Արա Բաբլոյանը, ԵՊԲՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ և հյուրեր:

Ներկայացնելով Էլենի Թեոխարուսին պրոֆեսոր Բաբլոյանը նշեց.

«Այսօր այստեղ եմ ներկայացնելու Ֆրանսիայի ազգային ժողովի պատգամավոր Էլենի Թեոխարուսին: Կին, ով իսկապես մեծ ներդրում ունի մեր հաղթանակների մեջ:

1992 թվականին, երբ Լաչինը բացվեց, Էլենի Թեոխարուսը արդեն Ղարաբաղում էր: Այս պատմությունը ես ցանկանում եմ ներկայացնել ոչ պաշտոնական, այլ ավելի բարեկամաբար, որովհետև նա մեր

բարեկամն է, մեր ընկերը: 1992-ին, երբ ես առողջապահության նախարար էի, նա մամակով դիմեց ինձ՝ ցանկություն հայտնելով այցելել Լեռնային Ղարաբաղ: Մեր հրավերով Էլենին եկավ Հայաստան, որտեղից էլ մեկնեց Ղարաբաղ՝ բուժօգնություն ցուցաբերելու երեխաներին, վիրավորներին, աղքատության մեջ գտնվող մարդկանց: Այդ օրվանից հետո Էլենին ամեն տարի այցելում է Հայաստան և Ղարաբաղ:

Էլենի Թեոխարուս՝ մեծ մարդ, մեծ հոգու տեր, մեծ մասնագետ, եթե ես սկսեմ թվարկել, թե ո՞ր երկրներին է օգնություն ցուցաբերել, գուցե ժամանակը չբավականացնի: Աֆրիկայում չկա մի վայր, ուր նա եղած և մարդկանց օգնած չլինի: Եվ այդ ամենը մարդասիրության, բարեգութության և իրական բժշկության պոռթկումի, մեծ զգացմունքների արդյունք է: Ես շատ ուրախ եմ, որ այսօր, ձեզ հետ միասին, կարողանում ենք մեծարել պրոֆեսոր Էլենի Թեոխարուսին: Այսօր, երբ մենք ասում ենք Հայաստանը քանի՞ պատգամավոր ունի եվրոպայում՝ մենք չենք նշում միայն հայ պատգամավորներին, մենք հիշում ենք Էլենի Թեոխարուսին և Ֆրանսիայի բոլոր պատգամավորներին, նրանք բոլորը մեր բարեկամներն են: Այն, ինչ ես ներկայացրեցի, միայն մի փոքր

մասն է կազմում Էլենի Թեոխարուսի աշխատանքային գործունեությանը»:

Շնորհակալություն հայտնելով շքանշանի համար՝ Էլենի Թեոխարուսն ասաց. «Ձեր համալսարանը հայտնի բուհ է, և նրա առաջին աստիճանի շքանշանն ստանալը մեծ պատիվ է ինձ համար, բայց թույլ տվեք ասել, որ Լեռնային Ղարաբաղում հանդիպած կանանց ժպիտները, ում երեխաները փրկվել էին վտանգներից, շատ ավելի թանկ են ինձ համար»:

Ֆրանսիայի ազգային ժողովի պատգամավոր Վալերի Բուայեն նշեց. «Սեծ պատիվ է ինձ համար խոսել այսօր ձեր ներկայությամբ, անկեղծ ասած շատ եմ հուզվում: Եթե ես այստեղ եմ, ի շնորհիվ Էլենիի՝ այս խմբի ղեկավարի: Բայց նաև նրա համար, որպեսզի ևս մեկ անգամ փաստեմ այն բարեկամական, ընկերական զգացմունքները, որ ես ունեմ Հայաստանի նկատմամբ: Երբ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին այցելեց Հայաստան՝ երկու տարի առաջ, նա ասաց, որ Հայաստանը քույր է Ֆրանսիայի համար: Այն ընդունելությանը, որ արժանանում ենք ձեր գեղեցիկ երկրում՝ Հայաստանում, իսկապես մեծ պատիվ է մեզ համար: Ես վստահ եմ՝ մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու միասին»:



Միջոցառման ավարտին ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարինյանյանը հավելեց. «Այն, ինչ ասաց պրոֆեսոր Բաբլոյանը շատ տպավորիչ էր, նաև՝ շատ հուզական, որովհետև ինքն էլ է եղել մասնակիցը այդ բոլոր գործողություններին: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ողջ խմբին՝ Հայաստանի և

Լեռնային Ղարաբաղի խնդիրներին մեծ ուշադրություն դարձնելու, Եվրախորհրդի մասն հեղինակավոր ամբիոնից այդ խնդիրները բարձրացնելու և դրանց լուծմանը նպաստելու համար: Մենք՝ գիտախորհրդի անդամներս, միաձայն որոշեցինք պարգևատրել էլեհի Թեոխարուսին բժշկական համալսարանի առաջին աս-

տիճանի շքանշանով:

Ի դեպ՝ խորհրդանշական են համարում այն հանգամանքը, որ պատիվ ունեցա հանձնել այդ շքանշանը՝ բենում տեղադրված Հիպոկրատի երդման վահանակի առջև»:

**ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԷԼԼԱ ԱՍՄԱՐՅԱՆ**

Professor Eleni Theocharous was Awarded First Degree Medal at YSMU

Professor Eleni Theocharous, head of the Armenia-European Union friendship group, pediatric surgeon, was awarded a first degree medal in the Yerevan State Medical University.

Valerie Boyer, member of National Assembly of France, Artak Zakaryan, the head of the Standing Committee on Foreign Relations of the National Assembly of Armenia, professor Ara Babloyan, head of the Standing Committee on Health Care, Maternity and Childhood of the National Assembly of Armenia, the University lecturers, students and other guests were attending the meeting.

When introducing Eleni Theocharous, professor Babloyan mentioned: "I want to introduce Eleni Theocharous not officially, since she is the friend of the whole Armenian nation. In 1992 when I was the Minister of Health Care, she turned to me through a written letter wishing to visit Nagorno Karabakh. We invited her to Armenia and from here she left for Karabakh where she provided medical aid to children, the wounded, helped to equip hospitals, and helped a village in poverty. From then on Eleni visits Armenia and Karabakh each year. Today

in our hospital there are surgeries done through Eleni's method.

She is a great person, a great specialist, has a huge heart, and if I start mentioning the countries which she has helped the time won't be enough. There is no place in Africa where she hasn't helped anyone. And all this is the result of great humanism, kindness, commitment and burst of great feelings. I am so much excited that I am present here to honor professor Eleni. And when we are asked how many parliament members we have in Europe, we don't mention just our members, we also mention Eleni Theocharous and all French parliament members, they are all ours. What I represented was just a little part of activities realized by her."

Thanking for the medal, Eleni Theocharous said: "Your University is a well known institution, and it is an honor to get a first degree medal here, but let me say that the smiles of women in Nagorno Karabakh, whose children avoided danger, are more precious for me."

The member of the French National Parliament Valerie Boyer mentioned: "It's a great honor for me to speak here today

at your presence, I am so much excited. And if I am here, it's due to Eleni the head of this group and also for stating once again the friendly feelings that I have towards Armenia. The hospitality and acceptance that we have here is simply a great honor and I know we have a long way to pass together."

At the end of the meeting YSMU Rector Michael Narimanyan thanked the guests who had already become relatives, for paying great attention to issues in Armenia and Nagorno Karabakh, and for promoting the solution to those issues from the authoritative tribune of the Council of Europe.



Բայց նամակ

«Եվրամիություն - Հայաստան» բարեկամություն խմբի ղեկավար Էլենի Թեոխարուսին



Միջերկրական ծովի արևելյան մասում, Թուրքիայից հարավ, իր գոյության հազարամյակների ընթացքում հիմնականում առանց պետականության քո չքնաղ երկիրը հավասարապես կիսել է իմ երկրի ճակատագիրը: Եվ գիտե՞ս ինչն է հիմնական պատճառը: Պատճառը նույն հարևանն է, ում նախագահն այսօր հայտարարում է. «Կիպրոս պետություն գոյություն չունի, կա միայն Հարավային Կիպրոսի հունական վարչակազմ և Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն»:

Ոչ ավել, ոչ պակաս... Դեռ շնորհակալ եղեք, որ աշխարհին չեն արգելում Կիպրոս բառն առհասարակ օգտագործել: Մեզ՝ հայերիս համար սա նորություն չէ. Բիբլիական Արարատը Ագրիդաղ են կոչում, Արցախը՝ Ղարաբաղ, պատմական Հայաստանի քաղաքները, տեղանուններն ու տարածքները անվանափոխել են, տաճարներն ու եկեղեցիները մզկիթներ դարձրել, սեփականացրել հայերի ունեցվածքը, իսկ հոգևոր կենտրոններից թալանածն ու առևանգածը ցուցադրում են իրենց թանգարաններում:

Ստամբուլի թանգարանում հպարտությամբ ցուցադրում են քրիստոնեական ոսկեգօծ ու ադամանդակուռ խաչեր ու բուրվառներ, մասունքներ պարունակող արծաթե աջեր, հայագիր մագաղաթներ ու հայտարարում, թե կոտորած չի եղել, այլ՝ կազմակերպված տեղահանություն... Բայց թե «տեղահանվածներն» իրենց սրբությունները տանելու փոխարեն ինչո՞ւ են թուրքին թողել՝ անհասկանալի է: Ի դեպ՝ հենց նույն Ստամբուլի դեպքում նույնպես գործել է «սեփականացրածն» անվանափոխելու տենդենցը. Ի՞նչ Կոստանդնուպոլիս, Ստամբուլ և վերջ...

Իր մեծությամբ Միջերկրական ծովի երրորդ կղզին, որ ավելի շատ դրախտ է հիշեցնում, կարող էր դուրս մնալ մեծան հարևանի ուշադրությունից: Իհարկե՞ ոչ... Ջարհուրելին այն է, որ

այդ «հարևանի» վարքագիծը նույնն է, ինչ 100, 200 տարի առաջ, երբ նվաճելու մոլուցքով տարված հրոսակները ոչ միայն կոտորում, նաև բռնաբարում էին... Հատկապես վերջինս նրանց վարքագծի ամենակրեճուն գիծն է... Քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ, ընդամենը 1974 թվականին, կիպրացի հույների ու թուրքերի բախման ժամանակ, երբ բնակչության ընդամենը 18 տոկոս կազմող թուրքերը նվաճեցին կղզու հյուսիս արևելյան մասը և հռչակեցին Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, բռնաբարությունների ալիքը նույնն էր, ինչ հայկական ջարդերի ժամանակ: Անասնական վարքագիծ ունեցող այս մարդախմբին չի կշտացնում ոչ բազմակնությունը, ոչ հարեմ ունենալը...

Գուցե սա՞ է պատճառը, որ թուրքից փախչելն է եղել փրկությունը, երբ տղամարդիկ ռազմադաշտում են եղել, կամ նախօրոք հավաքված ու սպանված՝ ինչպես հայերիս դեպքում: Ահա ինչու հազարավոր կիպրացիներ ու կիպրոսահայեր ուղղակի փախան վայրենիներից, տեղահանվելով գրավյալ տարածքներից, ում

փոխարեն բնակվելու եկան Անատոլիայի խորքերից այստեղ բերված թուրքերը: Ջավթիչի ու ավերողի ձեռագիրը նույնը եղավ նաև կղզու հյուսիսային մասում մնացած հայկական հոգևոր ճարտարապետության գլուխգործոցներից մեկի՝ սբ. Մակարավանքի նկատմամբ, որն այսօր... Թուրքական վանդալիզմի մյուս դրսևորումը Նիկոսիայի սբ. Աստվածամայր եկեղեցու հանդեպ դրսևորվեց, որի առաջնորդարանն ու վարժարանը այսօր որպես զորանոց են ծառայում թուրքերի համար:

Ծանոթ, շատ ծանոթ վարքագիծ է ընդամենը 16-րդ դարում այս տարածքում հայտնված և բոլոր հարևաններից տարածքներ գրավելու արդյունքում պետություն ձևավորած, բոլոր հարևաններին եկվորներ կոչող այս եկվոր ցեղախմբի համար:

Ես եղել եմ քո չքնաղ երկրում, որի մայրաքաղաքը աշխարհում միակ քաղաքն է, որ բաժանված է երկու մասի: Ես կանգնել էի հին քաղաքի հրադադարի գոտի կոչվող Կանաչ գծի ցածրիկ պարսպի մոտ ու մտածում էի, որ քո ժողովրդի համար նույնպես հայրենիքի վերամիավորման տեսլականը նույնն է, ինչ հայերիս համար ցեղասպանության կամ



Լուսանկարում՝ իմ ժողովրդի լավագույն բարեկամներից երկուսն են՝ Էլենի Թեոխարուսը (ձախից) և Վալերի Բուայեն:

Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչումը: Բեռլինը ևս ուներ բաժանարար գիծ ու պատ, որը վերացավ, քանի որ քանդվեց այն հասարակարգը, որը կանգնեցրել էր այդ պատը, որ երկու կողմերում գերմանացիներ էին: Ձեր դեպքում ելքը ոչ թե վերամիավորումն է, այլ վերակազմավորումը: Ձեր դեպքը նման է մեր ճակատագրին, քանի որ բաժանարար գծի, սահմանի մի կողմում բնիկն է, մյուս կողմում՝ գավթիչը: Նույն հարևանի «շնորհիվ» երկուսս էլ ունենք զոհերի հուշարձան, վերամիավորման երազանք... Քո երկիրը ոսկորի նման խրվել մնացել է Թուրքիայի կոկորդում, հենց նրա պատճառով Եվրամիությունը հնարավոր չի համարում Թուրքիայի ընդգրկումը Եվրոպական ընտանիքում: Ուրիշ էլ ո՞վ կարող է իրենը համարել մեր ցավը և ոչ միայն ի պաշտոնե, այլև հոգու ողջ խորությամբ: Վկայությունը այն հուզմունքը, այն չզսպվող արցունքները, որոնք ողջ ելույթիդ ընթացքում թաքցնել չկարողացար... Տա Աստված՝ իրականացնան մեր երկու ժողովուրդների երազանքները: Իմ ժողովրդի երազանքի իրականացմանն են ուղղորդված քո և այն խմբի անդամների ջանքերը, ովքեր իրենց հայտարարել են հայ ժողովրդի բարեկամներ և պաշտպանում են նրա շահերն ու իրավունքները՝ չվախենալով թուրքերի հոխորտանքներից: Իսկ որ այդպիսի վերաբերմունք կա՝ փաստ է: Օրինակը՝ քո ղեկավարած խմբի անդամներից մեկի, իմ ժողովրդի մյուս լավ բարեկամի հասցեին հնչող «սարսափազդու» հայտա-

րարությունները:

Ողջ հայ ժողովրդի համար Վալերի Բուայեի կերպարը սիրելի է ու առիճքնող: Նրան հարազատի ջերմությամբ էին վերաբերվում հատկապես այն օրերին, երբ նա ներկայացնում էր իր հեղինակած օրինագիծը, որը Ֆրանսիայի խորհրդարանի նախորդ գումարման կողմից հաստատվեց, սակայն, ցավոք, չընդունվեց Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի կողմից:

Թուրքական «Ջիհան» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Բուայեն նշել է, որ առ այսօր ցեղասպանությունների ժխտումը իրականացնող իր հեղինակած օրինագծի հետ կապված Թուրքիայի կառավարության և մամուլի որդեգրած անհանդուրժողական և հակաժողովրդական դիրքորոշումն ինքնին անպատասխանատվություն է: Ադրբեջանը բողոքի հայտագիր ներկայացրեց Ֆրանսիայի կառավարությանը, այն բանից հետո, երբ Վալերի Բուայեն և մի խումբ խորհրդարանականներ այցելեցին Լեռնային Ղարաբաղ:

Ի հակադրություն այս քայլի՝ Վալերի Բուայեն խոստացել է անտեսելով թուրքերի կողմից իր հասցեին հնչող սպառնալիքներն ու վիրավորանքը՝ մշակել նոր օրինագիծ, որում հաշվի առնված կլինեն Ֆրանսիայի սահմանադրության պահանջները, քանի որ նախորդ նախագիծը չհաստատվեց՝ հիմնավորելով, որ այն հակասում է Ֆրանսիայի սահմանադրությանը:

Թուրք հակերները ոչ միայն գրոհ

են սկսել Ֆրանսիայի ազգային ժողովի անդամ Վալերի Բուայեի դեմ, ոչ միայն կոտրել են Ֆրանսիացի պատգամավորի կայքը՝ փոխարենը տեղադրելով Թուրքիայի դրոշմը, այլև սկսել են համացանցի միջոցով սպառնալ նրան և նրա ընտանիքին, որի առիթով Բուայեն ստիպված է եղել դիմել ոստիկանությանը:

Լեռնային Ղարաբաղ Ֆրանսիայի խորհրդարանի պատվիրակության այցերից մեկի առիթով, որի կազմում էր գտնվում նաև Վալերի Բուայեն, ի պատասխան առանց Ադրբեջանի թույլտվության Լեռնային Ղարաբաղ գնալու առիթով Բաքվի բողոքի պատվիրակության ղեկավար, պաշտպանության և ռազմական հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Գի Տեյսեն իր շփոթմունքն է հայտնել այդ առիթով, նշելով, որ՝ «... մի բռնապետի կամակորության պատճառով Ղարաբաղի ժողովուրդը կարող է մի քանի տարուց նորից դժվարություններ ապրել իր հայրենի հողի վրա: Ֆրանսիան շատ է ուզում, որ այդ հակամարտությունը լուծվի խաղաղ ճանապարհով»:

Ֆրանսիայի պատասխանը Թուրքիայի և Ադրբեջանի վրդովմունքին Լեռնային Ղարաբաղ կատարվող այցելությունների առնչությամբ, ի սկզբանե եղել է խիստ ընդգծված՝ նշելով, որ դրանով Ֆրանսիան արտահայտում է իր քաղաքական դիրքորոշումը ԼՂՀ-ի նկատմամբ:

ՍԵՂԱ ԹՈՐՈՍՅԱԼ



Մարտելը միշտ էլ եղել է հայ ժողովրդի կողքին, հատկապես մեզ համար ծանրագույն օրերին եղել է մեր կողքին: Վկայությունը՝ Մարտելի քաղաքապետ ժան Կլոդ Գոդենի այցը Յայաստան, այդ թվում՝ Երևանի բժշկական համալսարան:



Բարձրագույն դպրոցի կրթական ծրագրերի եվրոպականացման ուղղությամբ նույնպես մեծ էր մեր ֆրանսիացի բարեկամների օգնությունը: Այդ առիթով բազմաթիվ այցելություններից մեկի պատվիրակությունը բժշկական համալսարանում ուսանողական միջոցառման ժամանակ:

OPEN LETTER TO THE HEAD OF THE ARMENIA-EUROPEAN UNION ELENI THEOCHAROUS

In the eastern part of the Mediterranean Sea, to the south of Turkey, during the centuries of its existence, mostly without being a state, your beautiful country equally shared the fate of my country. Do you know what the main reason is? The reason is the same neighbor, whose leader says today: "Cyprus does not exist, there's only Southern Cyprus Greek administration and the Turkish Republic of Northern Cyprus, no more, no less ... yet be thankful that the world is allowed to utter the word Cyprus. This is certainly no longer a new thing to us. Biblical Ararat is called Agri Dag, Artsakh is named Karabakh, the towns, areas of historical Armenia are renamed, the temples and the churches are changed into mosques, the properties of Armenians are privatized and the stolen and the robbed from the religious centers are demonstrated in their museums.

In Istanbul Museum the Christian golden and diamond crosses, relic containing silver items of religious leaders, Armenian maghaghats are proudly displayed and they still declare that it was not a massacre, simply an organized displacement... But why the "displaced armenians" left their sacred items, instead of taking them, is incomprehensible. By the way, in the case of Istanbul the tendency of renaming the "privatized" also exists. And what Kostantinoupolis, Istanbul and that's it....?

The third largest island in the Mediterranean Sea, which is more like a paradise couldn't stay out of the neighbor's attention, could it? Of course not ... it's terrifying that the neighbor's behavior is the same as 100, 200 years ago, when being obsessed by conquering mania, they not only murdered but raped ... Especially the latter is the vivid side of their behavior... Only in 1974, the civilized world witnessed how, during the collision of Cyprus Greeks and Turks, the Turks, forming only 18 percent of the population, conquered the north eastern part of the island and in the north of the island the Turkish Republic of Cyprus was declared. The rape wave was the same as during massacre of Armenians. The forage behavior of this herd is never satisfied, neither by the polygamy nor by harems... Perhaps this was the reason that salvation was simply running away from the Turks when the men were in the battlefield, or pre-gathered and as, in the case of the Armenians, killed. So this is why thousands of Cypriots and Armenian Cypriots ran away from the savages being displaced from the occupied territories, and instead, Turks living in the depths of Anatolia, came to live here. The handwriting of the intruder and invader was the same towards one of the Armenian architectural masterpieces St. Makaravank, situated in the northern part of the island, which is today....

Another manifestation of vandalism was towards the Monastery in Nicosia, the college and the primacy of which today serve as military barracks.

It's familiar, very familiar behavior for this tribe that appeared just in the 16th century.

I have been to your country, the capital of which is the only city in the world that is divided into two parts: I was standing at the low fence of the Green Line ceasefire zone and was thinking that the vision for the reunification of your

people is the same as the Nagorno-Karabakh's independence and international recognition of the genocide for us-Armenians.

Berlin also had a dividing line and a wall, which collapsed as the society who had built that wall collapsed as there were Germans on both sides. In your case the solution is not the reunification but restructuring.

Your case is similar to our fate: the native people are on one side of the border, and the occupant was on the other side. Due to the same neighbor we both have memorials to the victims, reunion dream ... Cyprus is stuck like a bone in Turkey's throat, and that's the reason that the European Union considers impossible Turkey's inclusion in the European family. Who else considers our pain as his, and not only officially, but also with the entire depth of the soul?

The evidence was the excitement, the tears that you couldn't help and hide during the whole speech. May God give us the chance to realize the dreams of our two nations. The efforts of your team and yours, who consider themselves the friends of Armenian nation and protect our interests and rights despite the threats of the Turks, are directed towards the realization of my nation's dream. And it's a fact that such attitude exists. For instance the terrifying announcements towards another friend of my nation.

The Image of Valerie Buayei is lovable and respectable. He was warmly welcomed especially during the days when he presented his bill which was approved by the French Parliament in the previous session, but, unfortunately, was not adopted by the Constitutional Council of France.

In the interview given to Turkish Cihan news agency, Buayen noted that the present policy of the genocide denial adopted by the Turkish government and the press is viewed as intolerant and anti-democratic stance. Azerbaijan presented a protest note to the French government, after Valerie Buayen's and a group of parliamentarians visit to Nagorno-Karabakh.

In contrast to this step Valerie Buayen, despite the threats and insults by Turks, promised to develop a new bill, which will take into consideration the requirements of the French Constitution, as the previous project wasn't approved, arguing that it contradicts the French Constitution.

Turkish hackers have launched not only an attack against the French National Assembly member Valerie Buayei, broke the French parliament's website instead placing the Turkish flag, but also they began to threaten him and his family through the web, and Buayen had to turn to police.

On one of the French Parliament delegation visits to Nagorno-Karabakh, where Valerie Buayen was also included, in response to the head of the protest delegation of Baku, the Parliamentary Committee on Defence and Military Tesyen, expressed his bewilderment. He says "Because of a wish of one tyrant Karabakh people may again have problems in their native land. France wants the conflict to be resolved peacefully so much".

ՎԻԼԵՆ ՊԱՐՈՒՅՐԻ ՅԱԿՈԲՅԱՆ

Երևանի Մ. Զերացու անվան պետական բժշկական համալսարանը սրտանց և ջերմորեն շնորհավորում է հայտնի բժիշկ-դեղագետ, գիտնական, հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, մանկավարժ և հասարակական գործիչ, ԵՊԲՀ նախկին ղեկավար, այժմ ԵՊԲՀ ղեկավարի խորհրդակցական, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, միջազգային ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Յակոբյանին՝ ծննդյան 75-ամյա հորեյանի կապակցությամբ, մաղթում ամենայն բարիք, հաջողություններ և առողջություն:

միջազգային ընկերության անդամ (Բեռլին, 2003 թ.), առողջապահության համաշխարհային կազմակերպության բժշկական կրթության փորձագիտական խմբի անկախ փորձագետ (Բրյուսել, 2001 թ.), Լեհաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի (Վարշավա, 1997 թ.) և ավելի քան 7 միջազգային այլ ակադեմիաների, ընկերությունների անդամ:

Ճանաչված գիտնականն ընդգրկվել է տեղական և միջազգային մի շարք հանդեսների խմբագրակազմերում:

1989-2008 թթ. Վ.Պ. Յակոբյանը խմբագրել է ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» ամսագիրը, եղել է Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի «Փորձարարական և կլինիկական ֆարմակոլոգիա» հանդեսի, Իրանի Իսլամական Հանրապետության «Բժշկական միջազգային ամսագրի» և մի շարք այլ հանդեսների խմբագրությունների խորհուրդների կազմում, մասնակցել է բժշկական խմբագրությունների միջազգային ընկերության «Հուլյս» նախագծի մշակմանը:

Ակադեմիկոս Վիլեն Յակոբյանի հետևողական գործունեության շնորհիվ 1991-ին Երևանի պետական բժշկական ինստիտուտն անվանվեց մեծն բժշկապետ Մխիթար Զերացու անվամբ, իսկ 1995-ին՝ վերակազմավորվեց համալսարանի:


Վ.Պ. Յակոբյանի գիտամանկավարժական գործունեությունն արտացոլված է նրա ավելի քան 300 աշխատություններում (մեծ մասը՝ միջազգային գիտական հանդեսներում), այդ թվում 7 մենագրության, 11 ուսումնամեթոդական ձեռնարկի, ֆարմակոլոգիայի հայերեն լեզվով առաջին 3 դասագրքի: Ստացել է 14 հեղինակային արտոնագիր:

Բժիշկ-գիտնական Վիլեն Յակոբյանը տասնամյակներ շարունակ զբաղվել է կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության ուսումնասիրության հարցերով: Գիտական հետազոտությունների նոր ուղղություն դարձան նրա առաջադրած սակավա-

շարժության և ֆիզիկական ակտիվության պայմաններում ուղեղային արյան շրջանառության կարգավորման մեխանիզմներին ուղղված աշխատանքները: Նա հաջողությամբ զարգացրել է ուղեղային արյան շրջանառության ինքնակարգավորման նյարդաքիմիական տեսությունը: Կենտրոնական նյարդային համակարգի ինտեգրատիվ գործունեության մեջ զանազան նյարդակազմի գործոնների դերի նպատակաուղղված հետազոտությունների շնորհիվ Վ. Յակոբյանը աշխարհում առաջին անգամ բացահայտեց նյարդակազմի ամինաթթուների կարգավորիչ դերը ուղեղային արյան շրջանառության գործում:

Վ.Պ. Յակոբյանը, որպես անվանի գիտնական և բժշկական կրթության հմուտ կազմակերպիչ, պարգևատրվել է «Մխիթար Զերացի» մեդալով, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» բարձրագույն շքանշանով, Ալբերտ Շվեյցերի ոսկե մեդալով, Վերնադսկու անվան «Ոսկե աստղ» բարձրագույն պարգևով, Ֆ. Նանսենի անվան ոսկե հուշամեդալով, ՌԴ բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի 10-ամյակի ոսկե մեդալով, հայրենիքի պաշտպանության և բանակաշինության գործընթացում ներդրած ուրույն ավանդի համար՝ «Դրաստամատ Կանայանի» մեդալով, ԼԴՀ «Մայրական երախտագիտություն» մեդալով, ՀՀ և ԼԴՀ զինված ուժերի պատվոգրերով, արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին, «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը, Մոսկվայի «Ամենափրկիչ Քրիստոսի տաճարի» կաթողիկոսության երախտավորագրին և այլն:

Մեծ բժիշկ-գիտնական և բազմափորձ մեր գործընկերոջը մաղթում ենք քաջ առողջություն, երկար տարիների կյանք և հաջողություններ մասնագիտական գործունեության մեջ:



Վիլեն Յակոբյանը ծնվել է 1938-ի մայիսի 1-ին, Հայկական ԽՍՀ Թալինի շրջանի Գառնահովիտ գյուղում:

1960-ին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Աշխատել է Արթիկի շրջանում՝ որպես գյուղական բժշկական տեղամասի վարիչ:

1967-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1977-ին՝ դոկտորական թեզերը:

1987-2006 թթ. Վիլեն Յակոբյանը ԵՊԲՀ-ում անցել է մեծ ճանապարհ՝ ավագ լաբորանտից հասնելով ամբիոնի վարիչի, այնուհետև՝ ղեկավարի պաշտոնների՝ դրսևորելով կազմակերպչի և նորարարի մեծ հմտություն:

Հայտնի դեղագետը, որպես բարձրորակ մանկավարժ և գիտակրթական գործի հմուտ կազմակերպիչ, մեծ եռանդ ու ստեղծագործական միտք է ներդրել ԵՊԲՀ-ում, որտեղ անընդմեջ աշխատել է 45 տարի: Անուրամալի են նրա ծառայությունները արտասահմանյան ուսանողների ներգրավման, անգլիալեզու ուսուցման համակարգ ստեղծելու, սեփական համալսարանական կլինիկական հիվանդանոցներ ունենալու գործում:

Նրա նախաձեռնությամբ 1994-ին ԵՊԲՀ-ում ստեղծվեց ռազմաբժշկական ֆակուլտետ, որն ապահովում է ՀՀ Ձինված ուժերին բարձր որակավորում ունեցող ռազմական բժիշկներով:

Վաստակաշատ գիտնական-բժշկի անունը վաղուց է դուրս եկել հանրապետության սահմաններից և ձեռք բերել միջազգային ճանաչում: Նա ընտրվել է անոթաբանների միջազգային քուլեջի գիտական խորհրդի պատվավոր անդամ (Նյու Յորք, 1994 թ.), դեղագետների միջազգային ֆեդերացիայի անդամ (Հագյու, Նիդեռլանդներ, 1996թ.), ֆարմակոլոգիայի միջազգային գիտական ընկերության անդամ (Բրյուսել, 1998 թ.), ուղեղային արյունահոսքի և նյութափոխանակության

Քաղաք-ամրոց Շուշիի փառահեղ հաղթանակը...

Շուշիի ազատագրումը մեր նորոթյա հաղթանակների պատկան է:

ԱՍՔԱՆԱԶ ԱՐԲՈՒՅԱՍՅԱՆ

Խոսելով Շուշիի մասին՝ ես ակամա հիշում եմ իմ առաջին այցը Ղարաբաղ: Ճանապարհը անվերջանալի դժվար էր ու երկար... Անգամ մի պահ ես մտածում էի՝ մի՞թե արժեք այսքան ճամփա կտրել տեսնելու համար Ղարաբաղը: Սակայն մտավախությունս երկար սպասեցնել չտվեց: Արդյունքում իմ առաջ համեցեց Լեռնային մի դրախտավայր, Ավետյաց երկիր՝ շքեղ բնությամբ, իսկ Ղազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցին հաստատում էր իր գոյատևման հավերժության առեղծվածը:

1992 թվականի մայիսի 9-ին ազատագրվեց Հայոց բերդաքաղաք Շուշին: Շուշիի հետ է կապված հայ ժողովրդի նորագույն պատմության ամենապանծալի էջերից մեկը՝ հայ ժողովրդի հաղթանակը Ղարաբաղյան ազատագրական պատերազմում: Շուշին դարձավ մեր հերոսական ազատամարտի հաղթական ավարտի հաղթական լուսապսակը: Շուշիի ազատագրման ծրագիրը կրում էր «Հարսանիք լեռներում» ծածկանունը, որը սկսվեց մայիսի 8-ից: Հայ զինվորները մայիսի 9-ի լուսաբացին հաղ-

թանակած մտան Շուշի բերդաքաղաք: Թշնամու ձեռքերով ավերված սուրբ Ամենափրկիչ եկեղեցու գմբեթին կարոտով ու հպարտությամբ շողաց հայոց եռագույնը: Ռազմական գործողությունը բացառիկ էր ու հաջողված: Այդ հաղթապսակը բարձրացրեց հայ զինվորի մարտական ոգին ու մղեց նրան նորանոր հաղթանակների՝ վախ ու խուճապ առաջացնելով հակառակորդի շարքերում...


Շուշին... Հպարտորեն բազմած է բարձրադիր սարահարթի վրա: Պարիսպների պատերը ձգվում են 2.5 կմ՝ սկսվելով սարահարթի հարավ-արևմտյան մաս խոյացող բարձր ժայռերից: Շուշիի մնացած կողմերը պաշտպանված են զանիվեր ժայռերով:

Շուշի քաղաքի հպարտությունը Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին է: Շուշիի ջարդերից հետո՝ 1920-ին տաճարը դադարեց գործելուց, ազերիների իշխանությանն անցնելուց հետո օգտագործվեց նախ որպես ամբար, իսկ հետագայում՝ որպես ավտոկայանատեղի: Այդ ժամանակը շրջանում էլ կործանվեցին տաճարի մուտքի մոտ դրված հրեշտակների արձանները, փլվեց գմբեթը...

Ամենափրկիչ եկեղեցին Հայաստանի նշանավոր պաշտամունքային կառույցներից է, որի մեջ վառ կերպով արտացոլված է հայ շինարարի հանճարը: Եկեղեցուց արևմուտք տեղավորված է եռահարկ զանգակատունը, որի վրա կանգնեցված են փող հնչեցնող հրեշտակների արձանիկներ:

Ի դեպ՝ ուշագրավ մի փաստ. Աստծո քանդակը հարավային պատին անհնար է չնկատել:

Է. Ա.



Ղարաբաղյան պատերազմի ժամանակ այստեղ էր գտնվում ազերիների հրթիռային համակարգի պահեստը: Ազատագրումից հետո տաճարն ամբողջովին վերանորոգվել է և գործում է՝ սկսած 1998 թվականից:

Ավարայրի ճակատամարտ...

Մենավոր մի դամբարան ծածկում է իր տակ ամփոփված մի հոգու հավերժական հանգիստը: Ասում են՝ Վարդանն է այդտեղ: Ճշմարիտ է դա՝ դժվար է ասել: Բայց դաշտավայրի վճիտ լռության մեջ, երբեմն կլսես կոկորդային մեղեդու մեղմածայն մի գեղգեղանք... Այդ մեղեդին երգվում է այն պահին, երբ ոտք են դնում Ավարայրի դաշտավայր: Վարդանանց նվիրված դարերի հին երգն է դա: Եվ այդ հավերժական երգի մեջ արդեն ճշմարտորեն ամփոփված են Վարդանը և Վարդանանք:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ, սկսած իր նախապատմական ժամանակաշրջանից մինչև այժմ, գոյատևել է իր հոգևոր արժեքների շնորհիվ: Հայաստանը եղել է պատերազմի թատերաբեմ՝ սկսած Արտավազդ թագավորի ժամանակաշրջանից: Հայ ժողովուրդը մղել է պատերազմներ երկու հզոր պետությունների՝ Պարթևստանի և Հռոմի դեմ, սակայն չի բնաջնջվել, ստեղծել ու պահպանել է իր մշակույթը, իր գիրը: Հայ ժողովրդի հարատևման գաղտնիքը քննել են թուրքերը, Սերյանը և շատ ուրիշներ: Սերյանի կարծիքով՝ հայը կարողացել է ապրել իր արքայական լեզվի և անրակուռ հոգու շնորհիվ:

Ավարայրի ճակատամարտը հայտնի է «Վարդանանց պատերազմ» անունով, քանի որ հայկական զորքերը գլխավորում էր սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Այն պատերազմ էր հանուն խղճի ազատության և անկախ պետականության: Ավարայրի ճակատամարտը Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարձրակետն էր: Պարսկական զորքերի խնդիրն էր ամեն կերպ ճնշել հայերի ապստամբությունը: Ճակատամարտը տեղի է ունեցել 451 թվականի մայիսի 26-ին՝ Ավարայր գյուղի մոտ...


Հայերը կորցրեցին զինվորների մեծ մասը, այդ թվում զոհվեցին նաև Վարդան Մամիկոնյանը, Վահան Արծրունին, Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Տաճատ Գնթունին, Հմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայեցին և Գարեգին Սրվանձտյանը: Սակայն ճակատամարտը ավարտվեց հայկական բանակի օգտին, քանի որ թշնամին երեք անգամ ավելի շատ կորուստ կրեց: Պարսկական արքունիքը ստիպված եղավ Հայաստանից հետ կանչել իր զորքը՝ հրաժարվելով հավատափոխության միջոցով հայերին ծուլելու ծրագրից:

Հայ առաքելական եկեղեցին Վարդան Մամիկոնյանին դասել է սրբերի շարքը:



Գրիգոր Խանջյանի կտավը կրում է եղիշեի Վարդանանց պատերազմի մասին «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն է» խորհուրդը: Նկարի կենտրոնում պատկերված է ճերմակ նժույգին հեծած զորավար Վարդան Մամիկոնյանը՝ աջ ձեռքին սուր, ձախով մարտահրավերի կանչող: Նա շրջապատված է հայրենիքի ճակատագրով մտախոգ, նրա համար մեռնելու պատրաստ զինված մարտիկների բազմությամբ: Սպիտակ հանդերձանքով ընդգծված է վասն հավատքի պայքարի ելնելու կոչով Ղևոնդ Երեցի ֆիգուրը:

Ուշադիր զննեցեք կտավը, և մեր ժամանակակից շատ մտավորականների դեմքերը թող ձեզ չշփոթեցնեն: Ըստ նկարչի՝ վերջիններս թեև չեն մասնակցել Ավարայրի ճակատամարտին, սակայն նրանց ողջ գործունեությունը նպատակաուղղված է եղել մեր հայրենիքի, լեզվի, մշակույթի զարգացմանը:



Արշիլ Գորկի (Ոստանիկ Սեդրակի Աղոյան)

Հիլ Գորկու ծննդյան 109-ամյակը:

Ամերիկահայ նկարիչը ծնվել է Վան նահանգի Խորգոմ գյուղում: Իսկական անունը Ոստանիկ Աղոյան է: Նախնական կրթություն ստացել է Խորգոմի և Վանի հայկական դպրոցներում: Վանի ինքնապաշտպանության հերոսամարտի ժամանակ Գորկին օգնում էր աշխարհագրայինների՝ նրանց զենք, փամփուշտ, հագուստ և սնունդ էր տանում:

1915 թ. հունիսի 15-ին, վերցնելով մի քանի օրվա սննդի պաշար և մի քիչ էլ գումար՝ Աղոյանների ընտանիքն ուղևորվեց Երևան: Ողջ ունեցվածքը թաղեցին տան բակում, կարծում էին, որ շուտով կվերադառնան, սակայն...

1919 թ. Ոստանիկը և քույրը տեղափոխվում են Թիֆլիս, հետո՝ ԱՄՆ: 1924 թ. տեղափոխվում է Նյու Յորք, սկզբում սովորում է Ազգային Ակադեմիայում, ապա Արվեստի կենտրոնական դպրոցում: Արշիլ Գորկին համակրելով ռուս ականավոր գրող Մաքսիմ Գորկուն՝ 1925-ին վերգրել է «Գորկի» ազգանունը:

1926 թ. ավարտել է Նյու Յորքի արվեստի կենտրոնական դպրոցը, որտեղ դասավանդել է հինգ տարի: Գորկին իր համար «ուսուցիչներ» էր ընտրել Պոլ Սեզանին, Պաբլո Պիկասոյին և Խուան Միրոյին:

1948 թ. ավտովթարից վնասվում է նկարչի ողնաշարը,

որի պատճառով այժմ ձեռքը դառնում է անաշխատունակ: Նույն թվականին Արշիլ Գորկին ինքնասպան է լինում Կոննեկտիկուտում գտնվող իր արվեստանոցում:

Ողջ կյանքի ընթացքում Վանի բնությունը և պատմական հուշարձանները եղել են Գորկու ստեղծագործման ներշնչանքի աղբյուր:

Արվեստն ունիվերսալ է... Արշիլ Գորկու ողջ ստեղծագործական ուղին ամփոփված է այս բառերի մեջ: Ամերիկայում նրան անվանում էին ամենահինտերմացիոնալ նկարիչ, 20-րդ դարի ինտելեկտուալ հեղափոխության զավակ:

Նրա լավագույն աշխատանքներից են՝ «Նկարիչը և իր մայրը», «Նատյուրմորտ», «Ինքնանկար», «Պեյզաժ», որոնք ստեղծվել են 20-30-ական թվականներին՝ ռեալիստական ոճով: Այս կտավներն իրենց տեղն են գտել աշխարհի խոշորագույն պատկերասրահներում. պահվում են ԱՄՆ-ի մի շարք մշտանավոր՝ Ուիթնի, Մետրոպոլիտեն, Լոնդոնի՝ Թեյթ, Փարիզի՝ Ժորժ Պոմպիդուի անվան ժամանակակից արվեստների թանգարաններում:

Այսօր Հայաստանում ևս հնարավորություն ունենք տեսնելու Արշիլ Գորկու հիասքանչ գծանկարներից մի քանիսը՝ այցելելով «Գաֆեսձյան» արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահ:

Ճիշտ է՝ համացանցի միջոցով մենք կարող ենք տեսնել Գորկու բոլոր նկարները, բայց այն չի կարող մեզ տալ այն ապրումները և զգացումները, ինչը մենք կարող ենք ունենալ նրա գծանկարի հետ անմիջական շփումից:

Է. ԱՍՄԱՐՅԱՆ

ՕՏԱՐՆԵՐԸ ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Նա (Գորկին) նման է հսկա սառցալեռան, որը մեծ մասով ընկղմված է օվկիանոսում և տեսանելի է նրա ընդամենը մի աննշան մասը: Բայց այն, ինչ երևում է, հզոր է և հրաշալի՝ իր փայլի մեջ:

ՈՒԻԼՅԱՄ ԴԵ ԿՈՒՆԻՆ
ամերիկացի նկարիչ

Խոսքեր չկան արտահայտելու այն, ինչն իր արվեստում արտացոլել է Արշիլ Գորկին: Նրա փակած դռները բախում են նույնիսկ մահվանից հետո: Բախում են, քանի որ չկա մեկը, ով կկարողանա բանալ դրանք: Դռները կարող է բացել միայն մեկ այլ Գորկի, որը նրա պես անտարբեր կլինի ամեն ինչի հանդեպ, բացառությամբ գլխավոր զոհաբերության՝ գեղանկարչության...

ԱԼԵՆ ԶՈՒՖՐԻ

Հիշում եմ մի նկարչի՝ Գորկուն, ով հարյուրից ավելի անգամներ առանց կտավի մյուս մասերը փոփոխելու մի փոքր տարածության վրա էր աշխատում՝ մինչև կատարելության հասնելը:

ԴԵՎԻԴ ՍՄԻԹ
ամերիկացի նկարիչ,
քանդակագործ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒՑ

Մի օր ես հայրենիք կվերադառնամ, սակայն միայն այն ժամանակ, երբ ամուր կանգնած կլինեն ոտքերիս վրա, որպեսզի փառաբանեն հայրենիքս:

Հայաստանը ջերմություն և կենսականություն, ուժ, մի յուրահատուկ երջանկություն ու թախիծ ունի: Տխուր՝ սակայն չհաղթված:

Վերջերս գիտակցությունս լցվել էր հայկական ծիրանների բույրով: Արվեստանոցումս, անշուշտ, ծիրաններ չկային, բայց բույրը այնքան հստակ էր, որ, կարծես, ծառն էի բարձրացել դրանք պապիկիս համար հավաքելու...

Կյանքս նման է անհանգիստ ծովի, որն ալեկոծվում է տխրությունից ու վշտից... Ես երեք գաղափարների «արտադրանք» եմ՝ մաքրություն, տանջանք և հասունություն: Տանջանքները հիվանդագին են, բայց՝ անհրաժեշտ: Ես միշտ զգում եմ մենակությունս, նույնիսկ ընկերներիս և հարազատներիս շրջապատում...

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» նոր
աշխատակցի առաջին ակնարկը

ԱՆԱԿՆԿԱԼ հանդիպում՝ օվկիանոսից այն կողմ

Մասնագիտական վերապատրաստման ընթացքում ուրախությունս և ոգևորությունս մեծ եղավ, երբ Վաշինգտոնում ամերիկացի իմ բարեկամը հրավիրեց ինձ այցելել ազգային պատկերասրահ: Սակայն այդ պահին ես դեռ բոլորովին անտեղյակ էի, որ ճակատագիրը բացառիկ անակնկալ էր պատրաստել ինձ համար: Անակնկալ հայտնություն, որ անբացատրելի ու անպատմելի պիտի ամբարեր իմ հոգում: Չկիսելով իմ տպավորությունները այդ նշանավոր պատկերասրահի և նրա տանիքի տակ հանգրվանած արվեստի ու մշակույթի աշխարհահռչակ վարպետների հանճարեղ գործերի մասին՝ շտապեմ պատմել այն հրաշքի մասին, որ անսպասելիորեն տեղի



տարբեր ուղղությունների գլուխգործոցները, երբ որոշեցի մոտենալ ու հարցնել պատկերասրահի աշխատակցին, թե արդյո՞ք ունեն որևէ հայ արվեստագետի գործերի ցուցադրություն: Աշխատակիցը մեծ պատրաստականությամբ ստուգեց քարտարանը ու ժպտալով պատասխանեց, որ ունեն Արշիլ Գորկուց 2 գործ, որից մեկը այդ պահին չէր ցուցադրվում: Անկեղծ ասած՝ չէի սպասում... Այդ լուրը լսելուն պես շփոթվեցի, սիրտս սկսեց արագ բաբախել, աչքերս փայլեցին: Ես անմիջապես վերցրեցի սրահ տանող ուղեցույց-քարտեզը ու քայլերս ուղղեցի դեպի վերելակ, իսկ ներսում զգացմունքներս թանձրանում էին ու թանձրանում: Մի քանի րոպե անց ես դեմ առ դեմ կանգնած էի մեծատաղանդ նկարչի հանճարեղ ու առեղծվածային «Նկարիչը և իր մայրը» կտավի դիմաց...

Չէի կարողանում հասկանալ իրականությունն է, թե՞ երագ, հրա՞շք է, թե՞ խաբկանք...

Խոսքեր չկան արտահայտվելու, այն ինչ տեղի ունեցավ ինձ հետ, խորունկ հույզերն ու զգացմունքները փոթորկել էին վանեցի արմատներով հայի իմ հոգին: Նայում էի կտավին... նայում էի երկար՝ դեմ առ դեմ կանգնած: Կտավը խոսում էր ինձ հետ կարծես հասկացնելով, որ վաղուց էր սպասում ... Ու կտավը աչքերիս առաջ դառնում էր պատմություն, պատմություն տառապանքի, մարդկային ողբերգության, անկատար երազների, կորստի ցավի և նաև սիրո, հավատի ու հույսի...

Տունդարձի ճանապարհին այնպիսի զգացողություն ունեի՝ կարծես վերադառնում էի ուխտատեղից, ուր դեմառդեմ հանդիպել եմ «Տիրամայրը զավակի հետ» խորին-խորհուրդ սրբապատկերի հետ:

Շատ արվեստաբանների կարծիքով նկարը չավարտելու ստույգ պատճառը հայտնի չէ, սակայն գտնում եմ, որ նկարը ավելի զորավոր է՝ անավարտ ձեռքեր տեսքով:




ունեցավ իմ կյանքում: Սովորական թվացող, բայց իրականում անմոռանալի օր ինձ համար:

Արդեն երեք ժամից ավելի էր, ինչ վայելում էինք համաշխարհային արվեստի տարբեր դարաշրջանների

ԷԼԼԱ ԱՍՄԱՐՅԱՆ

ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑԻ

Նրա անունն է կրուն այն բուհը, որտեղ սովորում ես



Ընդամենը հինգ տարի հետո՝ 2018 թ. լրանալու է 12-րդ դարի հայ մեծ բժշկապետ Մխիթար Հերացու ծննդյան 900-ամյակը: Կոչ են անում պատկան մարմիններին ՅՈՒՆԵՍԿՕ-ի մակարդակով կազմակերպել այդ կարևոր հոբելյանի անցկացումը Երևանում՝ 2018-ը հայտարարելով միջնադարյան հայ բժշկության տարի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ
հոգեբույժ-հոգեթերապևտ

Հայ դասական բժշկության հիմնադիր, բժշկապետ, բնագետ և փիլիսոփա Մխիթար Հերացին ծնվել է 1120 թվականին: Մասնագիտական կրթությունը ստացել է Կիլիկյան Հայաստանում: Գիտաբժշկական գործունեությունը ծավալել է Սիս մայրաքաղաքում ու կաթողիկոսանիստ Հռոմկլա ամրոցում՝ Ներսես Շնորհալու հովանավորությամբ: Տիրապետել է հունարեն, արաբերեն, պարսկերեն լեզուներին: Բժշկի գործունեության հետ միաժամանակ լուրջ հետաքրքրություն է ցուցաբերել մարդակազմության, ախտաբանության, ակնաբուժության, դեղագիտության, բնագիտության հարցերին՝ դառնալով հայ բժշկության մի շարք ճյուղերի հիմնադիր և ստեղծել արժեքավոր երկեր:

Դեղագիտության ու դեղագործության բնագավառներում իր ունեցած փորձի հիման վրա, Մխիթար Հերացին շարադրել է «Ախրապատինը», որը, ցավոք, մեզ չի հասել: 12-րդ դարի 80-ականներին Մ. Հերացին գրել է Կիլիկիայի ճահճոտ վայրերում լայնորեն տարածված և «Երկրային ախտաբանություն» համարվող տենդային հիվանդություններին նվիրված «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը, որը գրված է ժամանակի խոսակցական լեզվով:

Ուսումնասիրելով «բորբոսային» հիվանդությունները՝ Հերացին գտնում էր, որ «բորբոսային» գործոնը կարևոր դեր է կատարում չարորակ ուռուցքների, մասնավորապես քաղցկեղի առաջացման գործում: Նա թեև չկարողացավ լիովին հրաժարվել միջնադարում դոզմա դարձած հումորալ տեսության դրույթներից, սակայն նրա առա-

ջեթ մենք առանց կանխակալության համեմատենք Հիլդեգարդի «Ֆիզիկան», որը գրվել է մի քանի տասնամյակ առաջ, մեր հայ վարպետի ստեղծագործության հետ, ապա ստիպված կլինենք առաջնության դափնին վճռակա՜նապես շնորհել վերջինիս՝ բնությունը հիմնավորապես ճանաչելու, հետևողական և ինքնուրույն մտածողության և սխուլաստիկ լծից կատարելապես զերծ լինելու համար:

ԷՆՆԵՍ ՋԱՅՐԵՐ
արևելագետ, բժշկապատմաբան

ջադրած «բորբոսի» վարկածը վարակիչ հիվանդությունների ու քաղցկեղի առաջացման վերաբերյալ ժամանակակից տեսությունների կանխագուշակումն էր:

Տենդային հիվանդությունների վերաբերյալ Հերացու դասակարգումը հենվում էր ոչ միայն ախտաբանական ու պատճառագիտական սկզբունքների, այլև կլինիկական ուսումնասիրության՝ հիվանդի մանրակրկիտ հետազոտման վրա: Մեծ բժշկապետը նկարագրել է տենդային հիվանդությունների զարգացման 4 փուլ, որը համապատասխանում է Հիպոկրատի դասակարգմանը՝ հաշվի առնելով հիվանդի առանձնահատկությունները բուժման ընթացքում:

Հատկանշական է Մխիթար Հերացու առաջարկած դեղորայքային բուժումը, որ հենվում է նախ բույսերի, ապա կենդանական ու անօրգանական նյութերի բուժիչ հատկությունների վրա: Վարակիչ-ալերգիկական հիվանդությունների բուժման նպատակով առաջարկել է մի շարք բույսեր, ծաղիկներ (վարդ, մանուշակ, շուշան, նունուֆար), մրգեր (նուռ, փշատ, սալոր, խնձոր), բանջարեղեն (բամիա, ավելուկ, կոտեն, ռեհան, ծնեբեկ), վայրի բույսեր (կապար, ուրց, մատուտակ և այլն), որոնց մի մասը կիրառվում է նաև սննդաբուժության մեջ:

Մ. Հերացու բուժական համակարգում կարևոր տեղ ունեն նաև պսիխոպրոֆիլակտիկայի ու պսիխոթերա-

պիայի տարրերը, բժշկի ազդու խոսքը, երաժշտության բուժիչ ուժը և այլն: Նա հայ միջնադարի բժշկության նորարար էր, կիլիկյան բժշկական դպրոցի հիմնադիրը:

Հայաստանի նախարարների խորհրդի 1989-ի մայիսի 25-ի որոշմամբ՝ Երևանի բժշկական ինստիտուտը կոչվեց մեծ բժշկապետ ու մտածող Մխիթար Հերացու անունով: Բժշկական համալսարանի առաջադեմ ուսանողների համար սահմանվող ամենաբարձրը և պատվավորը Մխիթար Հերացու անվան կրթաթոշակն է, որին արժանանալը լավագույն ուսանողներից յուրաքանչյուրի նպատակն է: Այնուհետև, Երևանի պետական բժշկական համալսարանի աշխատողների պահանջով՝ համալսարանին հարակից փողոցը կոչվեց Մ. Հերացու անունով, նույն փողոցում բացվեց «Հերացու» պուրակը, որտեղ տեղադրվեց մեծն բժշկապետի կիսանդրին, որի վրա, ցավոք, նշված է բուսաբույժ՝ մեծն բժշկապետի փոխարեն: Ի դեպ՝ Հերացու անվամբ է նաև համալսարանական թիվ 1 կլինիկան: Այսօր բավականին պատվաբեր է «Հերացի» մեդալը, Հերացու պատկերն է նաև համալսարանական շքանշանի, մեդալների և հուշամեդալների վրա: 2012 թ. հուլիսի 4-ի կառավարության որոշմամբ՝ Հերացու անունով է վերանվանվել նաև Երևանի թիվ 30 դպրոցը, կոչվելով՝ «Հերացի» ավագ դպրոց:

Կամավորական աշխատանք՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով

ԵՊԲՀ-ի «Չերացի» ավագ դպրոցի կենսաքիմիական հոսքի աշակերտները՝ որպես ապագա բժշիկներ, արժեհամակարգի, հոգատար վերաբերմունքի ձևավորման, մասնագիտական կողմնորոշման, բժշկի աշխատանքի առանձնահատկություններին ծանոթանալու նպատակով իրականացրել են կամավորություն «Չերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում, որտեղ աշակերտները հնարավորություն են ունեցել ականատես լինելու վիրահատությունների, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն, բացի այդ նրանք իրականացրել են վիրակապություններ, խնամել են հիվանդների, սովորել են առաջին բուժօգնության կանոնները՝ ծանոթանալով բժշկի մասնագիտությանն ու մասնագիտական նրբություններին:

Բոլոր ժամանակներում կամավորությունը հանդիսացել է մարդասիրական և բարյացկամ վերաբերմունքի դրսևորում: Դպրոցի սոցիալական մանկավարժ Զ. Վարդանյանը գտնում է, որ կամավորական աշխատանքը հնարավորություն տվեց պատանիներին ձեռք բերել որոշակի մասնագիտական հմտություններ, հաստատել նոր կապեր, ձևավորել բարձր արժեհամակարգ:

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ (11-րդ դասարան), - Ամեն ինչ շատ հետաքրքիր էր: Այս կամավորական աշխատանքի միջոցով կարողացա հասկանալ, թե որքանով կարող եմ տիրապետել բժշկի մասնագիտությանը՝ համոզվելով, որ այն իսկապես հոգեհարազատ է ինձ: Իմ կարծիքով, բժշկի համար մարդկանց օգնելու ցանկությունը քիչ է. անհրաժեշտ է նաև մշտապես սթափ տիրապետել իրավիճակին, ինչպես նաև շատ կարևոր է լինել լավ մասնագետ:

ԱԴԵԼԱԻՎԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (11-րդ դասարան), - Չետաքրքիր էր ինձ համար մասնակցել այս նախաձեռնությանը: Մենք իմացանք շատ նորություններ, մասնակցեցինք վիրակապությունների: Հասկացանք, որ բժիշկը մասնագիտական հմտություններից բացի, պետք է ունենա համապատասխան արժեհամակարգ և հոգատար վերաբերմունք: Այս ամենը մեզ օգնեց կողմնորոշվել՝ արդյոք ուզում ենք դառնալ բժիշկ, թե ոչ, նաև օգնեց կողմնորոշվել կոնկրետ մասնագիտության ընտրության հարցում»:

Աշակերտների կարծիքները, դպրոցի սոցիալական մանկավարժի և սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչի դիտարկումները փաստում են, որ կամավորական աշխատանքը ծառայել է իր նպատակին:

Կամավորությունն իրականացվել է «Չերացի» ավագ դպրոցի նախաձեռնությամբ, ԵՊԲՀ-ի ռեկտոր Սիքայել Նարիմանյանի թույլտվությամբ,

ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության աշխատանքների գծով պրոռեկտոր Արմենակ Համբարձումյանի և «Չերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի գլխավոր բժիշկ Կարեն Սահակյանի աջակցությամբ:

Շնորհակալություն ենք հայտնում համալսարանին, հիվանդանոցային համալիրի աշխատակիցներին՝ համբերատար վերաբերմունքի, ուսուցողական հանդիպումների և կամավորության ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԵՊԲՀ «Չերացի» ավագ դպրոցի
մեթոդական աշխատանքների գծով
տնօրենի տեղակալ


Sudents' Volunteering Activity at YSMU

Volunteering has always been a demonstration of humanism and kind attitude at all times. All the students of biological-chemical stream of the high school of YSMU have realized volunteering activity at "Heratsi" N1 hospital where the students had a chance to participate in the operating processes, have received the necessary information, realized bandaging, looked after some patients, learned first aid, getting known the specific sides of the specialty of doctor. The students thank the staff of the hospital for their patience, for very informative meetings and for the support given during the volunteering.

ANN DEMURCHYAN



Մեր հյուրն է «Յերացի» ավագ դպրոցի տնօրեն Նարինե Սարգսյանը



- Ներկայացրեք և պատմեք խնդրեմ մի փոքր Ձեր մասին:

- Ծնվել եմ Լենինականում, սովորել եմ Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում: Առաջին մասնագիտությամբ երաժիշտ եմ, որին հաջորդել է հոգեբան-մանկավարժի որակավորումը, որից հետո ավարտել եմ իրավագիտության բաժինը: Ունեմ 20 տարվա մանկավարժական աշխատանքային փորձ: Դեկավարում եմ հասարակական մի կառույց՝ «Ապագան քոնն է» անվամբ: Լավ պատկերացում եմ ապագա քաղաքացու արժեհամակարգի ճիշտ ձևավորումը:

Ժամանակին ստանձնելով տնօրենի դերը՝ կարևորեցի քաղաքացիական հասարակության կայացման գործընթացը, թե ինչպիսի հիմքեր դնել ավագ դպրոցում, որպեսզի մեր շրջանավարտը կողմնորոշված լինի ճիշտ մասնագիտության ընտրության հարցում՝ դառնալու արժանի քաղաքացի իր երկրի համար: Դպրոց ղեկավարելը ինձ համար և հեշտ է, և դժվար, բայց միևնույն ժամանակ շատ պատասխանատու և հետաքրքիր գործընթաց է, երբ կրթում ես ապագա սերնդին՝ ապահովելով նրա ճիշտ ձևավորումը, ինչի համար ես և իմ կոլեկտիվը ոչ մի ջանք չենք խնայում՝ հաղթահարելով մեր առջև ծառայած բոլոր դժվարությունները:

- Ինչքա՞ն ժամանակ է, որ ղեկավարում եք «Յերացի» ավագ դպրոցը:

- Դպրոցում աշխատում եմ արդեն տարի ու կես: 2011 թ. հոկտեմբերի 19-ին դարձել եմ ավագ դպրոցի տնօրեն հաղթելով սահմանված մրցույթում:

Ինձ բախտ է վիճակվել վեց ամիս աշխատել թիվ 30 ավագ դպրոցում, որից հետո դարձա «Յերացի» ավագ դպրոցի տնօրեն:

- Ձեր կարծիքով ինչպիսի՞ն էր նախկինում այդ դպրոցի վարկանիշը: Ներկայացրեք դպրոցի անցած ուղին:

- Այն ժամանակ, երբ ես ստանձնեցի տնօրենի պաշտո-

նը, դպրոցի վարկանիշը բավականին ցածր էր:

Դպրոցը ունի շատ հին պատմություն: Այն հիմնադրվել է 1956-ին, եղել է հատուկ գիշերօթիկ դպրոց, որտեղ սովորել են սոցիալապես անապահով, բայց շատ խելացի երեխաներ՝ ունենալով կացարանի խնդիր: Դրան հաջորդել է այլ ստատուս՝ դառնալով հատուկ դպրոց: Լենինականի երկրաշարժից հետո դպրոցն ունեցել է սոցիալական ուղղվածություն. դպրոցում են ապրել սոցիալական որբեր, երկրաշարժից տուժած երեխաներ: Յետագայում մեզանից մեծ ջանքեր պահանջվեց գիշերօթիկ անունը հանելու համար:

Այնուհետև գիշերօթիկ դպրոցը դարձել է հանրակրթարան: 2012 թ. հուլիսի 4-ի կառավարության որոշմամբ՝ դպրոցը դարձավ «Յերացի» ավագ դպրոց: Դպրոցում աշակերտների թիվը 176-ն էր, իսկ 2012 թվականին, երբ ընդունելություն կատարվեց, մենք ընդունեցինք այնքան աշակերտներ, որքան առկա էին դպրոցում, դեռ ավելին՝ օգոստոսի դրությամբ արդեն ընդունել էինք թվով 187 աշակերտներ:

- Թվաքանակի աճը արդյո՞ք պայմանավորված էր դպրոցը «Յերացու» անվամբ վերափոխվելու հետ:

- Իհարկե՝ դա էլ նպաստեց, բայց ոչ ամբողջովին: Տնօրեն դառնալուց հետո կատարվեցին մի շարք ծավալուն աշխատանքներ, երեխաները ընդգրկվեցին տարբեր ծրագրերում, ինչը նպաստեց նրանց օրը ավելի հետաքրքիր դարձնել՝ նպաստելով մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը:

2012-13 ուստարուց մեր դպրոց դիմեցին շատերը՝ Պուշկինի, Աղբալյանի, Չեխովի դպրոցներից, ինչպես նաև երեխաներ՝ հարակից դպրոցներից:

- Ի՞նչ էր կարծում արդյո՞ք Յերացու անունով կոչվելու փաստը մարդկանց մոտ առաջացնում էր կարծիք, որ կարող է երեխան ընդունվել Երևանի պետական բժշկական համալսարան, ասենք մրցույթից դուրս՝ հարգացրույցով կամ առանց քննության:

- Շատ ճիշտ հարց տվեցիք: Իհարկե, շատերը անտեղյակ էին, որ դպրոցը արդեն հուլիսից պատկանում է բժշկական համալսարանին: Սակայն նրանք, ովքեր իմանում էին, շտապում էին դպրոց՝ հետաքրքրվելու դպրոցի առավելությունների մասին: Այս պահի դրությամբ միակ առավելությունն այն է, որ դպրոցը Յերացու անունով է և պատկանում է բժշկական համալսարանին: Համալսարանը մտահոգ է, որ դպրոցը լինի ավելի լավ պայմաններում, ուշադրություն դարձվի հատկապես կենսաքիմիական հոսքի երեխաների կրթության որակի բարձրացմանը, երեխաները հնարավորություն ունենան այցելել բժշկական համալսարան՝ մասնակցելու տարբեր սեմինարների: Ինչ վերաբերում է հարցազրույցով կամ առանց քննության բուհ ընդունվելուն, այս պահի դրությամբ նման բան չկա, դժվարանում եմ ասել՝ հետագայում կլինի նման բան, թե՞ ոչ: Ինձ թվում է՝ շատ խիստ

պետք է մոտենալ ապագա բժշկի ընտրությանը: Քանի որ բժշկի մասնագիտությունը շատ պատասխանատու մասնագիտություն է, գործ ունես մարդու կյանքի հետ, շատ կարևոր է մասնագիտության հանդեպ սերը:

- Ուսուցիչների վերաորակավորումը ի՞նչ պարբերականությամբ է տեղի ունենում և որտե՞ղ է այն անցկացվում:

- Կառավարության որոշմամբ՝ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված ծրագիր կա, ըստ որի ավագ դպրոցի տնօրենները դիմում են ներկայացնում ուսուցիչների որոշակի քանակի, ովքեր պետք է վերապատրաստվեն: Վարապատրաստվելուց հետո փաստաթղթային ատեստավորում է լինում, որից հետո ունենում են ատեստավորված ուսուցչի կարգավիճակ, որին էլ հաջորդում է տարակարգ ստանալը: Յուրաքանչյուր ատեստավորում անցած ուսուցիչ պետք է ունենա որոշակի հոդված տպագրված: Մենք բոլորս շահագրգիռ ենք դպրոցում կրթության մակարդակը բարձրացնելու, որպեսզի ունենանք այնպիսի որակյալ ուսուցիչներ, ովքեր կկարողանան համապատասխան գիտելիքներ մատուցել աշակերտներին և ավագ դպրոցի առաքելությունը կատարեն լիարժեք: Այսինքն՝ երեխան դպրոցում ստանա այնքան որակյալ գիտելիք, որը նրան թույլ կտա միասնական քննությունները հաղթահարել և ընդունվել ցանկացած պետական բուհ: Մեզ համար շատ կարևոր է, որ աշակերտը վստահի դպրոցի տված գիտելիքին և չգնա մասնավոր պարապմունքների, որոնց համար ծնողները ստիպված են վճարել: Դպրոցը պետք է իր դերը կատարի հավուր պատշաճի և ծնողը պետք է հասկանա, որ իր երեխան եկել է դպրոց գիտելիք ստանալու: Մենք բժշկական համալսարանի ռեկտորի, պրոռեկտորի, վարչության պետի հետ միասին որոշել ենք ամեն ինչ անել՝ կրթության որակը բարձրացնելու համար՝ աջակցելով ուսուցիչներին, որոնց համար կազմակերպում ենք դասալսումներ, որոնց հաջորդում են համապատասխան խորհրդատվությունները: Եթե ուսուցիչը լավ չի տիրա-

պետում իր մասնագիտական հմտություններին, սկզբում կաջակցենք, կտանք հնարավորություն, որ նա աշխատի իր վրա՝ հզորացնելով մանկավարժական հմտությունները, որից հետո կանցկացվի գիտելիքի ստուգում՝ գործնական եղանակով:

- Մեր համալսարանը որևէ կապ ու՞նի դպրոցի ֆինանսավորման հետ:

- Ուսուցիչները վարձատրվում են աշակերտների թվաքանակով: Այս պահին մենք ունենք 333 աշակերտ, որի համար պետությունը համապատասխան գումար է հատկացնում դպրոցին: Այսինքն ուսուցիչը ներկա պահին վճարվում է պետության կողմից՝ ստանալով ցածր աշխատավարձ:

Այսօրվա դրությամբ մենք հանդիսանում ենք ԵՊԲԳ-ի մատակարարը, այսինքն՝ երեխաներին կրթում ենք՝ ուղղորդելով դեպի բուհ: Բուհն էլ իր հերթին բավականին աջակցություններ է ցուցաբերում դպրոցին. այս տարի մենք չունեցանք ջեռուցման խնդիր՝ ի շնորհիվ բժշկական համալսարանի: Թույլ տվեք իմ խորին շնորհակալությունը հայտնել բուհի ռեկտոր Միքայել Նարիմանյանին և ողջ անձնակազմին՝ դպրոցին աջակցելու համար:

Մեզ համար մեծ պատիվ է, որ մեր դպրոցը կրում է մեծն բժշկապետի՝ Մխիթար Զերացու անունը: Զէ՞ որ դպրոցը նաև ձերն է և այն հանրակրթական ստորաբաժանում է: Ակնկալում են, որ մեր դպրոցը կդառանա այն առաջավոր դպրոցներից մեկը, որի մասին կխոսվի Երևան քաղաքում և բոլորը կճանաչեն՝ որպես անվանի դպրոց: Կարծում են՝ շատ հեռու չէ այդ օրը, քանի որ արդեն նկատում ենք մեր ցանած սերների ծիլերը:

- Շնորհակալություն հարցազրույցի համար, կարծում են շատ մոտ ապագայում կխոսենք արդեն իսկ կայացած ծրագրերի շուրջ:

**Հարցազրույցը՝
ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

Խորհրդային տարիներին ուսանողության հասարակական աշխատանքների գլխավոր ուղղություններից մեկը շեֆական աշխատանքն էր դպրոցներում: Վերջին տարիներին դպրոցներից բացի ուսանողները շեֆական աշխատանք էին տանում նաև ծերանոցում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում:

Ինչ խոսք՝ այդ աշխատանքը տարբերվում է այսօր իրականացվող շեֆական գործունեությունից: Հիշյալ ծրագրի իրականացման ընթացքում ուսանողները լինում էին ոչ միայն դպրոցներում, հանդիպում աշակերտների հետ, օգնում նրանց մասնագիտության ընտրության հարցում, այլև այցելում էին ծերերին, զբաղեցնում նրանց, հոգում բժշկական առաջին օգնության որոշ հոգսեր, անգամ ներկում, վերանորոգում ծերանոցի ու մանկատների դուռ ու ցանկապատ, երգում, պարում, իրենց նվերներով ուրախացնում

այն մարդկանց, ովքեր գթասրտության կարիք ունեն: 1988-ի երկրաշարժից հետո մեր ուսանողության մի ստվար զանգված կենտրոնացրեց իր ուշադրությունը երկրաշարժից տուժած, ծնողազուրկ երեխաների



հետ տարվող աշխատանքի վրա: Լուսանկարում քնքշանքի և վշտակցության կարոտ երեխաների հերթական այցն է բժշկական համալսարանի ուսանողների այն խմբին, ովքեր աշխատում էին նրանց

հետ, անում հնարավորին՝ նրանց ուրախացնելու համար...

Հիմա փոխվել են շեֆական աշխատանքի ընդգրկումներն ու ձևերը, սակայն խմբագրության փոստում դեռևս պահպանվող երախտագի-

տական նամակները ծերերից, մանկատան սաներից վկայում են՝ գթասրտությունը բժշկի մասնագիտության անենակարևոր բաղադրիչն է...

Ա. Թ.

ԵՊԲՀ-ի հետ համագործակցությունը՝ հաջողված փորձ Հայաստանի և Հնդկաստանի երկկողմ հարաբերություններում

ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Արմեն Աշոտյանն ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Շրի Սուրեշ Բաբուին:

Հանդիպման սկզբում կողմերն անդրադարձել են հայ և հնդիկ ժողովուրդների պատմական բարեկամությանը՝ նշելով, որ կրթությունը երկկողմ հարաբերություններում համագործակցության ավանդական ոլորտներից է: Քննարկելով կրթական համագործակցության ծրագրերը կարևորվել են հատկապես բարձրագույն կրթության ոլորտում փոխադարձ կրթաթոշակային ծրագրերը: Որ-

պես հաջողված փորձ՝ մատնանշվել է Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ համագործակցությունը: Դեսպանն ընդգծել է, որ ներկայումս ԵՊԲՀ-ում մոտ 700 հնդիկ ուսանողներ ստանում են մրցունակ բժշկական կրթություն, իսկ մինչ այդ սովորած ուսանողներն արդեն համալրել են Հնդկաստանի առողջապահության համակարգը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաև երկու երկրների միջև դիպլոմների փոխճանաչմանը, ուսանողների փոխանակման և մի շարք այլ ծրագրերի:



Cooperation with the YSMU as a Successful Attempt for Armenia-India Bilateral Relations

Armen Ashotyan, the acting minister of Education and Science, recently met with Shri Suresh Babu Tadipaneni, the ambassador of India in the Republic of Armenia.

At the beginning of the meeting they spoke about Armenian and Indian historic relationship mentioning that the education is the traditional field of cooperation in bilateral relations. When discussing about the educational cooperation projects, they mentioned the mutual scholarship programs in the higher education field of great impor-

tance. An example of a successful attempt was the cooperation with the Yerevan State Medical University. The Ambassador noted that at present there are around 700 Indian students earning their degrees in YSMU, and the Indian graduates already work in the Indian health care system.

During the meeting they also spoke about the mutual recognition of diplomas, student exchanges and other projects.

Ամեն ինչից առաջ՝ կարգապահություն

Ընդհանուր բժշկության ֆակուլտետում տեղի ունեցած կարգապահական խախտման երկու դեպքերի կապակցությամբ ֆակուլտետի ղեկան Նունե Շահվերդյանի հղումները ԵՊԲՀ ռեկտորին: Առաջին դեպքում անկարգություն թույլ տվողը առաջին կուրսի ուսանող է, երկրորդ դեպքում՝ դասախոս, երրորդ դեպքում՝ չորրորդ կուրսի ուսանողներ: Երեք դեպքերում էլ պատժվել են անկարգության «հեղինակները»:

Մարտի 20-ին ֆիզիկայի դասախոսության ժամանակ 110 խմբի ուսանող Վահե Օսիպյանը լսարանում գտնվող ասիստենտ Քրիստինե Եղիազարյանի կողմից խիստ դիտողության է արժանացել հեռախոսով խոսելու համար: Ուսանողը հակադարձել է դասախոսին. «Դու ո՞վ ես, որ ինձ դիտողություն անես», - ուսանողին անվայել արտահայտությամբ: Երբ ուսանողին փորձել է կարգի հրավիրել դասախոսությունը կարդացողը՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Լ. Պետրոսյանը, ստացել է. «Քո հետ հետո կխոսեն» պատասխանը, որից հետո Վահե Օսիպյանը լքել է լսարանը:

Ուսանողի լկտի վարքագիծն աշխուժություն է առաջացրել նրա 2 ընկերների՝ Արման Տանանյանի և Հայկ Քոչարյանի մոտ, որոնք նույն տոնով փորձել են պաշտպանել իրենց ընկերոջը:

Ուսանողների և դասախոսի հանդիպ-

ման ժամանակ տպավորությունն սպասվածից ավելի վատ էր: Վահե Օսիպյանը դասի ժամին հեռախոսային խոսակցությունը վերագրեց մոր վիրահատությանը, միաժամանակ չժխտելով, որ խիստ վիրավորվել է դասախոսի դիտողությունից, որովհետև «բանակում ծառայած հասուն մարդը գիտակցում է իր արարքը, և դասախոսը պարտավոր է դա հասկանալ ու դիտողություն չանել իրեն»: Իմ այն հարցին, թե արդյոք չէ՞ր կարելի հարգալից ձևով ներողություն խնդրել և բացատրել կատարվածի պատճառը, Վ. Օսիպյանը պատասխանեց, որ 150 մարդու ներկայությամբ չէր պատրաստվում բացատրություն տալ, բայց իր հանդեպ հարգանք պահանջող այդ նույն ուսանողը նորմալ է զնահատում 150 հոգու ներկայությամբ ամբիոնի վարիչի հետ դու-ով խոսելը:

Մյուս երկու ուսանողներն արդարանալու անհմաստ փորձեր արեցին, բայց ակնհայտ էր, որ նրանք սոսկ ցանկացել են իրենց «համարձակությամբ» կուրսում «հեղինակություն դառնալ»:

Եթե ուսանողի նման վարքագիծն անհանդուրժելի է առհասարակ, ապա առաջին կուրսեցունը՝ անհասկանալի ու աններելի: Ուստի առաջարկում են Վահե Օսիպյանին հեռացնել համալսարանից, իսկ Արման Տանանյանին և Հայկ Քոչարյանին հայտարարել ռեկտորատային նկատողություն:

Արդյունքում՝ Վահե Օսիպյանը հեռացվեց Երևանի պետական բժշկական համալսարանից, իսկ Արման Տանանյանը և Հայկ Քոչարյանը ստացան ռեկտորատային նկատողություն:

Մարտի 25-ին 417 խմբի ուսանողները չէին ներկայացել ԼՕՌ առարկայի նախատեսված հարցմանը՝ գրավոր պատճառաբանելով, որ տեղեկացված չեն եղել հարցման օրվա մասին, քանի որ մեկ շաբաթ շարունակ «հնարավորություն չեն ունեցել հանդիպել իրենց դասախոսին»: Դասախոսը՝ Ավետիք Մինասյանը, ուսանողների հետ հանդիպել է ցիկլի առաջին օրը՝ ժամը 13.50-ին, դասն ավարտվելուց 10 րոպե առաջ և հայտարարել, որ «չի պատրաստվում գալ դասասենյակ ու դաս բլբլալ. եթե ցանկություն ունեն, թող գան դիտելու իր վիրահատությունները»:

Ուսանողների ներկայությամբ հանդիպեցի ԼՕՌ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շուքուրյանի հետ: Նա վրդովվեց կատարվածի առնչությամբ և պարտավորվեց ամբիոնական միստ հրավիրել ու պարզաբանել տեղի ունեցածը:

Մարտի 29-ին ամբիոնի միստին հրավիրված էինք նաև ես և ստոմատոլոգիական ֆակուլտետի ղեկան Լ. Եսայանը, սակայն պարոն Մինասյանը ներկա չէր առողջական խնդիրների պատճառով: Քննարկումների արդյունքում որոշվեց բավարարվել Ավետիք Մինասյանին գրավոր նկատողու-

թյուն ներկայացնելով՝ հաշվի առնելով նրա առողջական խնդիրները, (որոնք, ի դեպ ծագել են կատարված դեպքից հետո), այլապես դասախոսի նման վարքագիծը, ըստ ամբիոնի վարիչի, արժանի էր ավելի խիստ վարչական պատժի:

Ձեկուցագիրը ներկայացնում են 3 շաբաթ ուշացումով, քանի որ ակնկալում էի հանդիպել Ավետիք Մինասյանին և նրանից ստանալ բանավոր ու գրավոր բացատրություն, բայց սպասումներս չարդարացան, դասախոսի իբր շարունակվող առողջական խնդիրների պատճառով:

Ուսումնական գործընթացի լուրջ խաթարման համար առաջարկում են ԼՕՌ ամբիոնի ասիստենտ Ավետիք Մինասյանին հայտարարել գրավոր նկատողություն:

Կից ներկայացվել է նաև ուսանողների դիմումը և ամբիոնի միստի քաղվածքը:

Արդյունքում՝ Ավետիք Մինասյանին հայտարարվեց խիստ նկատողություն:

Ապրիլի 17-ին 432 խմբի ուսանողներ Գրիգոր Թարվերդյանը և Գուրգեն Գրիգորյանը միջանցքում բարձրաձայն վիճաբանում էին: Վարչական ստորաբաժանումների աշխատակիցների միջամտությամբ կանխվեց դեպքերի հետագա զարգացումը: Միջադեպի պատճառը պարզաբանելու համար՝ հրավիրեցի նշված ուսանողներին, նրանց համակուրսեցիներին, ծնողներին: Պարզվեց, որ վերջիններս անհաշտ են եղել դեռևս սեպտեմբերից, և այդ օրվա վեճը հրահրվել է առանց որևէ լուրջ պատճառի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկուսն էլ գիտակցեցին իրենց արարքի անթույլատրելիությունը, զղջացին, բացի այդ՝ ուսման 4 տարիների ընթացքում նշված ուսանողները չեն ունեցել որևէ կարգապահական խախտում, առաջարկում են նրանց նկատմամբ ավելի խիստ պատիժ չսահմանել և բավարարվել ռեկտորատային նկատողությամբ:

Արդյունքում՝ Գրիգոր Թարվերդյանը և Գուրգեն Գրիգորյանը ստացան ռեկտորատային նկատողություն:

Ներկայացնում ենք ԵՊԲՀ աշխատակազմի նոր ղեկավարին

Շնորհավորելով մեր լավագույն երիտասարդ կադրերից մեկին՝ Գագիկ Մուշեղի Միրիջանյանին, խնդրեցի ներկայացնել այն բնագավառը, որը ղեկավարելու է ինքը: Ի պատասխան իմ առաջարկի՝ ԵՊԲՀ աշխատակազմի նոր ղեկավարը ներկայացրեց աշխատակազմի կանոնակարգը, որը ընդունվել է ԵՊԲՀ գիտական խորհրդի կողմից:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ



Գագիկ Մուշեղի Միրիջանյան

Ծնվել է 1981-ին Երևանում: Ավարտել է Երևանի Մ. Զեյնաբու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետը և բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրան՝ հանրային առողջություն և առողջապահության կազմակերպիչ մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունը սկսել է հանրային առողջություն և առողջապահության ամբիոնում որպես լաբորանտ:

2008-11 թթ. եղել է Երևանի Մ. Զեյնաբու անվան պետական բժշկական համալսարանի հանրային առողջություն և առողջապահության ամբիոնի, 2011-12 թթ.՝ բուժական հաստատությունների կառավարման և բժշկական իրավունքի ամբիոնի ասիստենտ:

2012-ից առողջապահության կառավարման և տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, մայիսից՝ նույն ամբիոնի ղեկավար:

2010-11 թթ. եղել է ստոմատոլոգիական ֆակուլտետի փոխղեկ, 2013-ին՝ բուժօգնության որակի վերահսկման բաժնի պետ: Ներկայումս Երևանի Մ. Զեյնաբու անվան պետական բժշկական համալսարանի աշխատակազմի ղեկավարն է:

2009-ին Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով բժշկագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2012 թ. մայիսին համալսարանական գիտական խորհրդի կողմից նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Հեղինակ է 39 հոդվածի և 3 մեթոդական ձեռնարկի, մասնակցել է 23 միջազգային և տեղական գիտական կոնֆերանսների:

Վերապատրաստման դասընթացներ է անցել Մոսկվայի Ի.Ս.Սեչենովի անվան պետական բժշկական ակադեմիայում:

Աշխատակազմի խնդիրները և լիազորությունները

1) Աշխատակազմի հիմնական խնդիրներն են ապահովել համալսարանի կազմակերպական հարցերի իրականացումը, ղեկտորի հանձնարարությունների կատարումը, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

2) Աշխատակազմն, իր խնդիրներին համապատասխան, լիազորվում է իրականացնել հետևյալ գործառնությունները՝

ա) նախապատրաստել ղեկտորի, ղեկտորատի կողմից արձակվող իրավական ակտերի նախագծեր և հայտնել իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի մասին կարծիք,

բ) կազմակերպել ղեկտորատի նիստի նախապատրաստական աշխատանքները, ղեկտորին ներկայացնել ղեկտորատի և ղեկտորի կողմից անցկացվող այլ խորհրդակցությունների օրակարգը, որոշումների նախագծերը,

գ) կազմակերպել համալսարանի ղեկտորատի նիստի մասին ծանուցումը ղեկտորատի անդամներին, համապատասխան ստորաբաժանումներին, համապատասխան գրանցամատյաններում գրանցել համալսարանի ղեկտորատի որոշումները,

դ) ղեկտորի հանձնարարությամբ համալսարանի գործունեության հետ կապված միջոցառումների և ծրագրերի նախագծերի մշակումը, ներկայացումը ղեկտորին, դրանց կազմակերպումը,

ե) համալսարանի կառավարման համապատասխան բնագավառներում գործերի ընթացքի պարբերաբար վերլուծությունը, հրատապ հարցերի բացահայտումը և դրանց հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը ղեկտորին,

զ) համալսարանի ղեկտորի հրամանների, որոշումների, հանձնարարականների կատարման նկատմամբ

առաջարկությունների ներկայացումը ղեկտորին,

է) յուրաքանչյուր եռամսյակի և տարվա ավարտից հետո նախապատրաստում և համալսարանի ղեկտորին ներկայացում զեկույց՝ տվյալ եռամսյակում և տարում քննարկված հարցերի, միջոցառումների տարեկան կատարողականի մասին,

ը) ղեկտորի հանձնարարությամբ՝ ղեկտորին ուղղված փաստաթղթերի մասին եզրակցությունների և առաջարկությունների կազմում,

թ) ղեկտորին դիմող քաղաքացիների ընդունելության կազմակերպում, ինչպես նաև նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների վերլուծություն, ամփոփում և ներկայացում ղեկտորին:

Աշխատակազմի ղեկավարումը

1) Աշխատակազմն անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը, որին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համալսարանի ղեկտորը:

2) Աշխատակազմի ղեկավարը՝

ա) ղեկավարում, պլանավորում, կազմակերպում է աշխատակազմի գործունեությունը,

բ) հանձնարարություններ է տալիս աշխատակազմի աշխատողներին և հսկողություն է իրականացնում նրանց գործունեության նկատմամբ,

գ) ներկայացնում է աշխատակազմը համալսարանի ներկայացուցչական և կառավարման մարմիններում:

3) Աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում իր իրավասությունները ժամանակավորապես իրականացնում է աշխատակազմի ղեկավարի տեղակալը՝ ղեկտորի որոշմամբ:

Միջազգային համագործակցություն քիլ համալսարանում

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ (օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոնի ուսումնական մասի վարիչ, դոցենտ) - Կրթաթոշակ ստանալով գիտահետազոտական ծրագրի համար՝ DAAD շրջանակներում երեք ամսով մեկնեցի Գերմանիա: Վերապատրաստումն անցկացրի Քիլ քաղաքի համալսարանական կլինիկայի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոնում: Քիլը Գերմանիայի հյուսիսային հողի՝ Շլեզվիգ-Հոլշտայնի մայրաքաղաքն է: Քիլի համալսարանը Գերմանիայի խոշորագույն համալսարաններից մեկն է, որը հիմնադրվել է 1665 թվականին:

Վերապատրաստումն անցկացրի բավականին հագեցած ծրագրով: Հետազոտական ծրագրի թեման էր. «Ադհեզիվ տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ ռոտացիոն մաշվածությունը ցիրկոնիումի ճենապակու և կոմպոզիտային ցեմենտի մակերեսների միջև», որի վրա աշխատում էի բավական ինտենսիվ, ամբիոնին կից գիտահետազոտական լաբորատորիայում: Ամբիոնի վարիչի կողմից թեման որոշվելուց և հաստատվելուց հետո ինձ հատկացվեցին բոլոր անհրաժեշտ սարքավորումները և նյութերը՝ փորձերը կատարելու և գրանցելու համար: Վերապատրաստման ծրագրի ընթացքում ես հնարավորություն ունեցա մասնակցելու ամբիոնում կատարվող կլինիկական գործընթացին՝ որպես հրավիրված բժիշկ: Այդ երեք ամիսներին իմ ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցի սեմինարներին, որոնք կազմակերպում և անցկացնում էր ամբիոնի վարիչը: Սեմինարներին ներկա էին Գերմանիայի տարբեր մասերից ժամանած բժիշկ ստոմատոլոգներ: Բացի վերոնշյալը՝ մասնակցել եմ նաև ներամբիոնական հավաքներին և դասախոսություններին, հնարավորություն ունեի մասնագիտական գրադարանից օգտվելու:



Իմ խորին համոզմամբ՝ վերապատրաստումը Եվրոպայի այնպիսի զարգացած երկրում, ինչպիսին է Գերմանիան, տալիս է մեծ հնարավորություններ մասնագիտական զարգացման համար: Վերապատրաստումը տվեց ինձ նոր գիտելիքներ, նոր հնարավորություններ՝ կատարելագործվելու միջազգային ստանդարտներին համապատասխան: Այն օգնեց ինձ զարգացնել մասնագիտական հմտություններս՝ նպաստելով մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը՝ ավելի արդյունավետ դարձնելով հիվանդների, գործընկերների, ուսանողների հետ շփումը:

Բացի մասնագիտական շփումից ես կարողացա զարգացնել նաև օտար լեզուներով խոսելու ունակություններս, ծանոթացնել օտարներին մեր մշակույթին, սովորույթներին և մեր պատմությանը:

Abroad Training Programs are Continuous



Քիլ համալսարանի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մաթիաս Կեռնի և նրա տիկնոջ հետ իրենց առանձնատանը:

Anna Vardanyan, the head of the educational department of the Orthopedical stamatomological chair, associate professor, having recieved a scholarship for scientific research work in the scopes of DAAD, went to the University of Kiel, Germany for three months. "I am deeply confident that being trained in such a leading University in Europe gives us numerous chances for professional development" says Anna. "It gave me deep knowledge, new possibilities for further professional rise according to international standards. It also helped to perfect my fluency in foreign languages and cooperate with natives not only professionally but also at personal level. Being integrated to their culture, traditions, in its turn helps us respect the traditions, culture and mentality of other nations".

ANN DEMURCHYAN

Ճանաչիր ազգային հոգևոր արժեքներիդ Հակոբ Հակոբյան



Ես շատ երիտասարդ էի, երբ սկսեցի հետաքրքրվել իմ հայրենիքով: Ես ինացա իմ ժողովրդի պատմությունը, սկսեցի կարդալ հայ գրողների գործերը, շատ սիրեցի Գրիգոր Զոհրապին, Ակսել Բակունցին, Եղիշե Չարենցին, Միսաք Մեծարենցին: Հայ դարձա: Ուրախսանում էի շատ՝ կարդալով Վահան Տերյանին: Հետո ինացա, որ երկիր ունեն, որ կոչվում է Հայաստան, Արարատ լեռան փեշերին հազարավոր տարվա բնօրրանն է, իմ նախնիների երկիրն է և ասացի՝ ինչո՞ւ եմ ապրում օտար երկրի մեջ: Շատ փոքր տարիքից զգացի, որ տան մեջ մի լեզվով ենք խոսում՝ հայերեն, դուրսը՝ արաբերեն: Ասում էի՝ սա ի՞նչ բան է, ինչո՞ւ՞ չկրնամ ապրել մի երկրի մեջ, որ տան մեջ էլ նույն լեզվով են խոսում, փողոցում էլ նույն լեզվով են խոսում, երկրի մեջ էլ նույն լեզվով են խոսում: Այսինքն՝ իմ հայրենիքս, իմ լեզուս հայ ժողովրդի ստեղծած ամենաբարձր արժեքն է:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Բոլորովին վերջերս կյանքից հեռացավ ՀՀ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր Հակոբ Հակոբյանը, ով ծնվել է 1923 թ. Ալեքսանդրիայում, սովորել Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, մասնագիտական կրթությունը ստացել Կահիրեի գեղարվեստի և Փարիզի Գրան Շոմիե ակադեմիաներում: 1962 թ. Հակոբ Հակոբյանը Կահիրեից ներգաղթել է Հայաստան:


